


0769

III -

3



ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԱՑԱԾ ՏԱՐԻՆ

Խաղաղութեան ողջոյնով մը ծնաւ 1899 տարին, ու թնդանօթի զոռուսներու մէջ կը վախճանի։ Ռուսիոյ կայսրը անցեալ տարուան առաջին ամսուն աշխարհիս բոլոր պետութեանց հրաւեր կարգաց միաբանիլ և սահման մը դնել անպարզ սպառազինութիւններուն որոնք ժողովուրդները տնտեսապէս ու բարոյապէս կը փճացրնեն։ Եւ երբ Խաղաղութեան Համաժողովը իր նիստերը Լա Հէ կը շարունակէր, Անգլիա արդէն կը անսնէր պատրաստութիւնները պատերազմի մը որուն Եւրոպայի ապագային վրան ունենալիք ազդեցութիւնը տակաւին ո՛չ ոք կրնայ գուշակել։ Ֆրանսա, Իտալիա, Աւստրիա, իրենց ներքին խնդիրներովը զբաղած, արտաքին քաղաքականութեան մէջ շատ զոյժ և գրեթէ ձեռնպահ ուղղութեան հետեւեցան։ Ռուսիա իր գանձային վիճակին բարւոքմանը, իր ասիական երկաթուղիներուն յառաջացմանը, ու ծայրագոյն Արևելքի մէջ հաստատուն կոռուս մը պատրաստելու աշխատեցաւ։ Միացեալ-Նահանգները, թէև իբր Մոնրոէի վարդապետութեան հաւատարիմ աւանդապահներ, կը յայտարարեն թէ Եւրոպայի գործերուն չեն ուզեր միջամտել, բայց հիմա ո՛ր կը սկսի Եւրոպան, ո՛ր կը վերջանայ։ Ծայրագոյն-Արևելքն մինչև Բարեյուսոյ Գլուխը, ամբողջ Ասիան ու Ափրիկէն Եւրոպայի մրցակցութեան առարկէն են։ Միացեալ-Նահանգները Եւրոպայի հինգ պետութեանց հետ Չինաստանի իբր ժառանգորդ կը ներկայանան, ու հիմակ ոգի ի բոյն կ'աշխատին իրենց ամուր կոռուս մը պատրաստել Ֆիլիպին կղզիներուն մէջ, որոնց բնակիչները արիւարար կ'ընդդիմադրեն օտարներու այս անարդարանալի գրավմանը։ Գերմանիոյ քաղաքականութեան կէտ նպատակին իր տնտեսական վիճակին բարգաւաճումը ըլլալով, Եւրոպայի խաղաղութիւնը անվտանգ պահելու աշխատեցաւ։ Իր հովանաւորութեանը ներքև են Աւստրիան ու Իտալիան, իր բարեացակամութեան յարը հաւատարապէս զգացնել տուաւ թէ՛ Անգլիոյ և թէ՛ Ռուսիոյ, և ճարպիկ քաղաքականութեամբ մը

և հզօր բանակով մը ակնածանքի մէջ պահեց Ֆրանսան, որուն մոռցնել կուտայ Ալգաս-Լորէնը և 1870-71ի պատերազմին վրիժառութեան գաղափարը։ Աւելի քան երեք Գերմանիա 1899ին հաստատեց իր քաղաքական գերիշխանութիւնը Եւրոպայի վրայ։

* * *

Թիւրքիա այդ գերիշխանութեան քաղաքներուն ներքև կ'ծկտած կարող եղաւ արտաքին քաղաքականութեան կողմէն յաջող տարի մը ևս բուրբել։ Երբ 1898 թուականը կը վերջանար ընդհանուր համոզում մը կը տիրէր թէ Մակեդոնական ու Հայկական հարցերը Եւրոպայի խնդիրներուն օրակարգին մէջ առաջին տեղը պիտի զբաւէին 1899ին։ Վիլհելմ Բ որ կը հետամտի օսմանեան պետութիւնը գերման կայսրութեան մէկ նահանգը ընելու, յաջողեցաւ Պաղտատի երկաթուղիին սակարկութեամբ արգիլել Եւրոպայի կողմէն ո՛ր և է պահանջում որ կարենար սուլթանին դժկամակութիւն պատճառելով արգիլել գերման ծրագիրներուն յաջողութիւնը։ Աւստրիա և Ռուսիա շարունակեցին յարատեւել պալքանկան խնդիրները առժամապէս մոռցուած պահելու իրենց համաձայնութեան մէջ, ու Մակեդոնիա որ իր աշխարհաբար կան զերբովը Հայաստանի բաղդակից կը համարուի, անպայման ատենի մը համար զոհուեցաւ պետութեանց նկատումներուն։ Թիւրքիա ուրեմն արտաքին ո՛ր և է ճշունչովէ ազատ մնաց։

Այդ յաջող քաղաքականութիւնը սակայն անբաւական եղաւ դադրեցնելու Կ. Պոլսոյ իսլամութեան յարաճուն տեղահանութիւնը որ անցեալ տարի ահեղօրէն տագնապեց սուլթանը։ Չնրբակալութիւնները այլևս չսահմանափակուեցան երիտասարդ ուսանողներու շրջանակին մէջ միայն։ Բանտարկուեցան ու աքսորուեցան այնպիսի անձնաւորութիւններ որոնք բարձրագոյն դասակարգերը կը ներկայացնէին. — պետական խորհրդի անդամներ, իլէմաններ, բարձրաստիճան պաշտօնատարներ, զօրավարներ ամբաստանուեցան ու դատաւարտուեցան իբր ներկայացուցիչ ազատական գաղափարներու և զանոնք տարածող։ «Ազատական գաղափար» բացատրութեամբ Թիւրքերը կը հասկնան սուլթանին անստնձ միապետ

տութեան գէժ հակառակող ոգին: Խալաթներէն հեռա-
տեսները զգացին թէ սուլթանին արտաքին քաղաքա-
կան յաջողութիւնը անսխալական ապացոյց մըն է պե-
տութեան ներքին սկարացմանը: Սուլթանը երբ իր կայս-
րութիւնը տախնապալից ահեղ կացութեան մը մասնուած
կը տեսնէ, կ'երթայ կը մտնէ եւրոպական գերիշխանու-
թեան մը ներքեւ: Ուրիշ ազգերու լեզուով պարտութիւն
կը նշանակէ օտարէն խնդրուած այս պաշտպանութիւնը,
իսկ Երլարզի խաբեպատիր բարբառովը «քաղաքական
փայլուն յաղթանակ»: Խելահաս թիւրքերէն ո'չ ոք կը
տարակուսի թէ երկրին վըայ տարածուած գերմանա-
կան հովանաւորութիւնը, որ կը փոխարինուի Պաղտա-
տի երկաթուղիին մենաշնորհովը, թիւրքիոյ քաղաքա-
կան անկախութեան մահաբեր հարուածը պիտի տայ:
Փորձառութիւնը հաստատած է թէ Եւրոպացիները երբ
խլամ պետութեան մը տնտեսական զարգացմանը կը
նպաստեն, ուշ կամ կանուխ այդ երկրին տէրը կը դառ-
նան, վեհապետին թողով անուանական իշխանութիւն
մը միայն: Գերմանիա որուն կ'աջակցին Ֆրանսայի եւ
Անգլիոյ դրամատերները, օտանեան կայսրութիւնը կարճ
ժամանակի մը մէջ պիտի վերածէ Եգիպտոսի մը, և
խալիֆա սուլթանները պիտի պաշտօնավարեն խտրվու-
րուն վայելած իշխանութեան չափովը:

Այս վտիները, իսլամներուն կրած ահաբեկ ճնշումը,
միանալով տնտեսական ահեղ տագնապին, զօրացուցին
հակասուլթանական զգացումը: Թիւրքիոյ 1890ի ելմտա-
կան անձկութիւնը իր նախընթացը չունի վերջին տաս-
նեակ տարիներու շարքին մէջ: Ինչպէս որ երկրի մը
տնտեսական վերականգնումը կարճ ժամանակի մը գոր-
ծը չի կրնար ըլլալ, նմանապէս անկումն ալ սկզբնաւո-
րութեան թուականէն տարիներ յետոյ զգալի կ'ըլլայ:
Սուլթանին վերջին տանամեակին քաղաքականութիւնը
ցամքեցուց երկրին հարստութեան բոլոր աղբիւրները,
որոնք արդէն առատահոս չէին: Երկրագործութիւն, վա-
ճառականութիւն, ճարտարագործութիւն, սեղանաւորու-
թիւն որոնք իրարու շղթայուած կը զարգացնեն երկիր
մը, ամենքն ալ ծանրածանր հարուածներու ենթարկուե-
ցան սուլթանին յիմար ու շարամիտ քաղաքականու-
թեամբը: Բարգաւաճման համար ամէն յատկութիւննե-
րով օժտուած այդ երկիրը հետզհետէ անապատի մը
կը վերածուի: Վերջացած տարուան մէջ թիւրք պաշ-
տօնեաները երկու ամսական միայն ստացան: Ո'չ մէկ
փաստ այնքան պերճախօս է թիւրքերը համոզելու հա-
մար թէ իրենց կայսրութիւնը կը կործանի որքան ամ-
սականներու վճարման յապաղումը:

Սուլթանը այս բոլոր վտանգները լաւ ըմբռնած է,
բայց անկարող է խելացի քաղաքականութեամբ մը ա-
նոնց առջեւ առնել, վասն զի Ապտիւլ Համիտ զիւա-
նագէտի մը յատկութիւնները թէեւ ունի, բայց օժտուած
չէ պետական մեծ մարդու մը ձիրքերովը: Հաւատարմ
մնաց ըսան տարուան իր վարչական սկզբունքին, այն
է ժամանակ շահիլ այնպիսի կարգադրութիւններով ու-

րոնք թէեւ զինքը օրը օրին կը հանդատացնեն բայց պե-
տութեան վիճակը ապագային համար աւելի կը ծանրա-
ցնեն: Խալաթներուն մէջ օրէ օր աւելի ուժգնապէս երե-
ւան եկած ընդդիմադրական ձգտումը սպաննելու հետա-
մտեցաւ, ինչպէս միշտ, փոխանակ գէթ տարրական բա-
րեկարգութեանց ներմուծմամբ գոհացումի սկզբնաւորու-
թեան թուական մը բանալու: Եւրոպա գտնուող երի-
տասարդ-թիւրքերուն մէկ մասը նորէն գնեց, իսկ Պոլիս
գեղահութիւն յայտնող լուրջ, խոհական, կշիռ ունեցող
անձնաւորութիւնները ջանաց սարսափով չէզոքացնել կամ
ոչնչացնել: Գանձային դատարկութիւնը քիչ շատ պար-
տրկեց առօրեայ մանր մունր միջոցներով, տեւական
տնօրինութեան զաղափարը առանց իսկ մտաբերելու:
Իսկ Պաղտատի երկաթուղիին խնդրէն վախցուած բոլոր
վտանգները առժամապէս յետաձգելու համար, մինչ մէկ
կողմէն մենաշնորհը տուաւ Գերմանացիներուն, միւս
կողմէն առկախ ձգեց վերջնական պայմանադրութեան
կնքումը: Մենաշնորհը ստացող Եւրոպացիները գործի
չեն կրնար ձեռնարկել մինչեւ որ համաձայնութիւնը վերջ-
նապէս գոյացած չըլլայ: Այդ նպատակաւ բանակցու-
թիւնները յառաջիկայ գարնան պիտի սկսին: Թիւր-
քերը ճանչցողները դիւրաւ կ'ընդունին թէ անոնք ըս-
քանչեւապէս ընդունակ են, երբ հարկ տեսնեն, բանակ-
ցութեան մը սկզբնաւորութենէն մինչև վախճանը բազ-
մաթիւ տարիներ սահեցնել տալ: Այս ժամանակամիջո-
ցին Գերմանիա եւ իրեն ընկերացող Ֆրանսան ու Անգ-
լիան երբեք տրամադիր պիտի չգտնուին ո' և է խնդրի
առթիւ գեղահութեան պատրուակ հայթայթել սուլ-
թանին մինչև որ պայմանադրութիւնը ստորագրեն լմըն-
ցնեն: Հաւանական է որ սուլթան Համիտ շատ փու-
թաշան պիտի չգտնուի ինքնապաշտպանութեան այդ զեն-
քէն շուտով զրկուելու: Յապաղումը շահաւէտ է սուլ-
թանին նաև Ռուսիոյ կողմէն ալ: Բեկրպուրիի գահ-
լիճը, որ աճապարանքի հարկը չի զգար Արևելեան ինդ-
րի մէջ, պիտի չուզէ ո' և է պահանջում ընել սուլթա-
նէն որքան ատեն որ անկա յաջողի խաղցնել Գեր-
մանիան և անոր շահակիցները:

Սուլթանին ճարպիկութեան արդիւնքը դիւանագի-
տական լեզուով քաղաքական փայլուն յաջողութիւն մը
կը կոչուի: Այդ յաղթանակը, որ երկրին հիւժուովը
կը ստացուի, կրնայ վտանգաւոր ըլլալ կայսրութեան մը
որուն ժողովուրդները զմեզակ տառապանքներով կը տան-
ջուին: Օրէ օր ծանրացող թշուառութիւնը եւ անոր բն-
կերացող ընդհանուր տեղահութիւնը սպաննալից են: Թիւր-
քիոյ համար 1900 թուականը քաղաքական յաջողու-
թեանց և ներքին տագնապներու հաւանականութեամբ
մը կը սկսի:

* * *

Թիւրքիոյ Հայոց համար 99 թուականը նախընթաց
երեք տարիներուն բնական շարունակութիւնը եղաւ: Մեծ
պետութիւնները հայկական խնդրին մէջ իրենց նստածեայ

բաղաբաականութենէն շեղելու ժամը 1899ին ալ տակաւին հասած չհամարեցին: Բեղրպուրիի զահիճը նկատելով որ սուլթանը լրջօրէն չի փութար իրագործել արեւմտեան Եւրոպայի այն սեղանաւորական ծրագիրները որոնք ոռուական շահերուն նպաստաւոր չեն, ինքն ալ Հայաստանի բարեկարգութեանց սպանալիքը լրջօրէն սուլթանին ներկայացնելու հարկ չտեսաւ: Իսկ Գերմանիա, Անգլիա, Ֆրանսա տնտեսական մեծամեծ առաւելութիւններ ստանալ հետամտելով, սուլթանին հաճոյակատար գտնուելու ջանադիր եղան:

Ապաիւլ Համիտ օգտուելով այս հանգամանքներէն իր հակահայկական ծրագիրներուն գործադրութիւնը անդու յարատեւութեամբ առաջ տարաւ ամբողջ պետութեանը մէջ, բայց մասնաւորապէս Բարձր Հայք, Ռուսիոյ աչքին առջեւ, անոր բարեացակամ թողտուութեամբն ու աջակցութեամբը:

Կոտորածն ու աւերումը առանց ընդհատումի շարունակուեցան Հայաստան: Բարձր-Հայքը մասնաւոր նպատակակէտը եղաւ հակահայկական բաղաբաականութեան: Ռուսիոյ եւ Թիւրքիոյ համաձայնութիւնը նախորդ տարիներու մէջ ամբողջ Վասպուրականը ջլատելէ յետոյ, 1899ին իր հարուածները տեղացուց էրզրումէն Մուշ տարածուած հայ հողին վրայ:

Կ. Պոլսոյ Պատրիարքարանը երկզիմի, վարանոտ բաղաբաականութեան մը հետեւելով ո՛չ ազգին ընդհանուր վստահութիւնը կրցաւ զրաւել, և ո՛չ ալ օսմանեան իշխանութեան քով ազգեցիկ ըլլաւ: Արտասահմանի Հայոց վարմունքը ցնցեց պատրիարքը, որ իր հրաժարականը տալէ յետոյ, յամառեցաւ զայն ետ առնելու: Օրմանեան պատրիարքին արիւթիւնը ենթադրել տուաւ թէ կացութեան ամբողջ ծանրութիւնը ըմբռնած ըլլալով, պիտի չուզէր առանց լուրջ երաշխաւորութիւններու իր աթոռը վերադառնալ: Ու երբ նորէն պաշտօնին զուլիւր անցաւ, լուստես ենթադրութիւնները ներքի կէն: Իրականութիւնը սակայն չարդարացուց այս յոյսերը: Պատրիարքին վերադարձին քիչ ետքը Հայաստանէն հեռո՛հեռո՛ հասած կոտորածի լուրերը ցոյց տուին թէ սուլթանին բաղաբաականութիւնը կը պահանջէր Հայոց պատրիարքը իր աթոռին վրայ տեսնել, այդ պահանջներուն գուժը Պոլիս ու Եւրոպա տարածուելէ առաջ: Հակառակ պարագային անկարելի պիտի ըլլար պատրիարքին իր հրաժարականը ետ առնել տալ, վասն զի ազգային զայրոյթը պիտոր արգիլէր Օրմանեան պատրիարքին համակերպութիւնը: Հայաստանի, հայկական ինդրին ու Կ. Պոլսոյ պատրիարքարանին պատմութիւններուն մէջ 1899 տարին տխուր էջ մը եւս աւելցուց:

Տխուր էջ մը, գուցէ անգարմանալի հետեւանքներով, աւելցաւ Ռուսիոյ Հայոց տարեգրութեանց մէջ ալ: Անգլիական մամուլին յայտնութիւնները ցոյց տուին թէ Ռուսիոյ կառավարութիւնը Չարին հպատակ Հայոց ազգայնութեան Գնչումը ապահովելու միջոցները անօրինելէ յետոյ, իր նպատակին դիւրաւ ու արագօրէն ծա-

մանելու համար՝ կողկասեան Հայոց տնտեսական փրճացումն ալ ծրագրած է:

Պարսկաստանի Հայերն ալ բարեբաստիկ տարի մը չանցուցին: Պարսկահպատակ Հայերը, բաղաբաւմամբ միւս երկու պետութեանց հպատակ Հայերուն, կրնային աւելի հանգիստ եւ ազատ համարուիլ. ոռուական բաղաբաականութիւնը տարիներէ ի վեր խանգարեց այդ քիչ թէ շատ զահացուցիչ վիճակը. ու առապանքներու թուականը սր բացուեցաւ, մասնաւոր թիւրքիոյ սահմանակից պարսկական հողերու Հայոց համար, այլ եւս չփակուեցաւ:

Հայ ազգին համար 1899 թուականը դժբաղդութեանց տարիներուն շարունակութիւնը եղաւ: Հայ ժողովուրդը որ իր պատմութեան ամբողջ ընթացքին մէջ հոգեկան մեծ ուժով դիմադրած է ամենահեղ հարուածներու, անշուշտ այս դաճնութեան օրերուն ալ պիտի տոկայ: Ու լուսազոյն ապագայ մը մեզի ապահովեալ կըրնանք նկատել, եթէ մեր գործած սխալներէն ու մեր վերայ ծանրացած ազէաներէն փորձառութեամբ օգտուիլ գիտնանք: Այս յոյսով է որ կը մտնենք նոր տարին:

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ

Անոնք որ ժօռէն ճանչնալու բախտը ունեցան Տիգրան Երկաթը, անշուշտ լացին ինձի պէս, իրենց սրտին մէջ, երբ անոր մահուան գուժը առին:

Չինքը սիրեցինք իր ազնիւ ընաւորութեանը, իր խանդակաթ հողիին, իր բարձր իմացականութեանը, իր անոյշ ու յանկուցիչ դէմքին համար: Չէ՛, մահը չէ որ կը սրբէ, կը մաքրէ իր թերութիւնները և զինքը կատարեալ ու ամբիժ կը ցուցընէ հիմակ մեզի: Տիգրան Երկաթ ճշմարտապէս ու զերազանցապէս անթերի եղաւ, և վստահ եմ որ ամենուս քով թողած յեշտակը շպիտի ազօտի որ և է չնչին արատով մը:

Առաջին անգամ Պոլիս ճանչցայ զինքը չորս տարի առաջ, այն յոյսով ու խանդավառութեամբ տաք օրերուն՝ ուր ամէն Հայ իրար կը փնտուր կը գտնար, սիրոյ ու եղբայրակցութեան հրայքէն մղուած: Ա՛լ կասկածը ու զգուշաւորութիւնը իրենց թոյնը չէին կաթեցնել խօսակցութիւններուն մէջ, և երկուան ծանօթը հետեւայ մտերիմ բարեկամ մը կը պանար, որուն հետ սանձարձակ ու սրտաբաց կը տեսնուէինք: Ա՛հ, անշուշտ, երբ ձախողանքի խորշակը փչեց, գտնուեցան տկար ու ճղճիւժ հոգիներ որոնք կասկածեցան իրենց յոյսերուն ու խանդավառութեան վրայ եւ ուրացան զանոնք և անոնց հետ ուրացան նաև այն բարեկամները որոնք հաւատարիմ մնացած էին իրենց ուխտին: Բայց Տիգրան Երկաթ անոնցմէ եղաւ որ չընկրկեցան ու չտկարացան, այլ նոր խանդով մը փարեցան իրենց յոյսերուն ու նոր կորո-

վով պատրաստուեցան պայքարը մղելու:

* * *

Երբ Պոլիսը ձգեցի 96 օգոստոսին, Տիգրան Երկաթ հոն էր տակաւին, բայց գիտէի թէ մտադիր էր ինքն ալ երթալու Եւրոպա, ուր կը փափաքէր զանազան քաղաքներու մէջ բանախօսութիւններ կազմակերպել և ծանօթացնել Եւրոպացիներուն Հայերն ու հայկական խնդիրը: Իր խորին հմտութիւնը ֆրանսերէնի ու անգլիերէնի և բեղուն ու զարգացած միաքը կ'ապահովէին իր գտնալիք յաջողութիւնը: Ինչ որ կ'արգիլէր ժամ առաջ դործադրելու իր գաղափարը, նախ առողջութեանը քայքայուած վիճակն էր ու յետոյ նիւթական դժուարութիւնները:

Սակայն օգոստոսի շարդէն հաքը ա'լ չէր ուզած մնալ Պոլիս, հրաժարական տուած էր Ռէմիի վարչութեան մէջ ունեցած պաշտօնէն ու ինքզինքը նետած շոգենաւ մը:

Երբ օր մը Բիբէ՛ պատահմամբ՝ Պոլսէն եկող ֆրանսական շոգենաւը գացի, տեսայ զինքը կամրջակին վըրայ: Շոգենաւը փոթորիկի բռնուած էր ու ինքը երկու օր չարչարուած խցիկին մէջ: Իր հիւանդ վէճը ա'լ աւելի զեղներ էր ու խեղճը կը սասկար մտածելով որ դեռ հինգ օր ճամբայ ունէր ընելիք մինչև Մարսել: Համոզեցի զինքը ճամբորդութիւնը ընդմիջել, երկու շաբաթ մնալ Աթէնք ու յաջորդ նաւովը մեկնիլ:

Միասին ցամաք ելանք ու հետեւեալ օրն իսկ ինքզինքը լաւագոյն զգաց: Անմիջապէս քաշալերուելով իր խաբուսիկ կազդուրումէն, ուզեց, օգտակարապէս գործածելու համար իր օրերը Աթէնքի մէջ, ֆրանսերէն բանախօսութիւն մը ընել: Գացինք Աքրոքոլիսի, Ասդիի, Հեսթիայի խմբագրատունները եւ յայտնեց իր դիտարութիւնը: Ամենքն ալ սիրալիք ընդունելութիւն մը ըրին իրեն և սքանչելի գտան բանախօսութեան գաղափարը: Ու ահա՛ հետեւեալ օրը բոլոր թերթերը ծանուցին արդէն Տիգրան Երկաթի ժամանումը Աթէնք, իր գրական տաղանդը, իր բանախօսութեան նիւթը և այն սրահին հասցէն ուր պիտի կատարուէր բանախօսութիւնը:

Այսպէս մենք իսկ թերթերէն իմացանք բանախօսութեան նիւթը ու սրահին անունը: «Յունաստան եւ Հայաստան», այս խորագիրը տուեր էին Աթէնքի խմբագիրները Տիգրան Երկաթի խօսելիք նիւթին: Տիգրան Երկաթ շատ յարմար գտաւ իրեն թելադրուած նիւթը և անմիջապէս սկսաւ պատրաստել իր բանախօսութիւնը, մինչ ես գացի բանակցիլ, թերթերուն ցոյց տուած հասցէին համեմատ, Պառնասոսի ակումբին նախագահին հետ, որպէսզի հաճէր իրենց սրահը ձրիաբար մեր տրամադրութեան տակ գնել գիշերուան մը համար: Նախագահը՝ Պ. Լամպրոս՝ որ թերթերէն տեղեկացած էր խնդրին, ամենայն ազնուութեամբ հաւանեցաւ և խոստացաւ ամբողջ իր ընկերներով ներկայ գտնուիլ բանախօսութեան: Յաջորդ օրը տոմսակները տպել տուինք եւ սկսանք ցրուել:

Հոկտեմբեր 7ին, չորեքշաբթի զիշեր, տեղի ունեցաւ բանախօսութիւնը: Սրահը լեցուած էր խմբագիրներով, գրապէսներով, պաշտօնեաներով, զինուորականներով ու բազմաթիւ կիներով: Տիգրան Երկաթ ժամուկէս խօսեցաւ: Բազմաթիւն մը ըրաւ Հայոց և Յունաց նկարագրին միջև. երկու ցեղերուն առանձնայատկութիւնները պարզեց, պատմեց Բիւզանդեան կայսրութեան ժամանակ իրարու հետ ունեցած իրենց յարաբերութիւնները, ցոյց տուաւ կ. Պոլսոյ գահին վրայ բարձրացած հայազգի թագաւորները և վերջացուց թուելով այն նիւթական ու բարոյական օգուտները զորոք երկու ազգերը պիտի կրնային քաղել ապագայ զաշնակցութենէ մը, երբ Հայերը տէր ըլլային իրենց ճակատագրին:

Իր բանախօսութիւնը հսկայ յաջողութիւն մը եղաւ: Բոլոր թերթերը քաղուածքներ հրատարակեցին անկէ ու Աքրոքոլիս գրեթէ ամբողջութեամբ թարգմանեց յունարէնի: Բայց շաբաթուան մը մտային յոգնութիւնը, պատաստելու համար իր բանախօսութիւնը, սպառած էր իր տկարութեքը, ու հետեւեալ օրը, երբ պանդոկ գացի, պառկած գտայ բարեկամս: Ամբողջ ամիս մը մնաց անկողին և հագիւ կրցաւ նոյեմբերի վերջերը մեկնիլ Աթէնքէն: Բարիզէն ինծի ուղղած նամակի մը մէջ կը գրէր. «Բարիզ հասայ. բիւզանդեան Գրիտոսոսի մը պէս երթեացա՞մ»: Գանի մը ամիս ետքը կը վերադառնար Աթէնք, թիւրքահեղինական պատերազմին առթիւ, իբրև թղթակից ֆրանսական մէկ քանի թերթերու:

Այդ միջոցին թողած էի Աթէնքը և կը գտնուէի Եգիպտոս: Հո՛ն տեսայ զինքը կրկին, երբ պատերազմը վերջանալէն կտրուեց և կաւ եզրիպատական կլիմային տակ առողջութիւն գտնելու յոյսով: Հիմակ աւելի նիհարեցա՞մ, աւելի ակարացած էր: Բարիզի օդը ու յետոյ Աթէնք՝ թղթակցութեանց համար կրած յոգնութիւնները բոլորովին քամած էին զինքը: Եւ սակայն միշտ նոյն աննուա՞ն ու կորովի հոգին էր. կարծես կենդանի հերքումն էր ինք «առողջ միտք՝ առողջ մարմնոյ մէջ» առածին: Ալեքոսանգրիա՛ անկողին մէջ, թե՛ն ու սաքը յօդացաւէն բռնուած, Տիգրան Երկաթ յօգուածներ կը գրէր Ռիվիա տէ Ռիվիաին Արեւելեան խնդրին վրայ: Այդ յօդուածները որոնք հոսատող ստորագրուած կ'երեւնային, ընդհանուր ուշադրութեան առարկայ դարձած էին, ու Ֆրանսայի արտաքին գործերու նախկին նախարար Պ. Հանոթօ և Լոնտոնի ֆրանսական դեսպան Պառոն տը Գուռուէ խնդրած էին բարիզեան հանդէսին անօրէնութիւնէն յայտնել իրենց այդ յօդուածները գրող «գիւանագէտ»ին անունը: Երաստղը անշա՛փ ընդունելութիւն գտած էր հասարակութենէն՝ որ երբ Տիգրան Երկաթ ուզեց իր անունովը ստորագրել յօդուածները՝ անօրէնութիւնը մերժեց:

Բայց եկաւ օր մը ուր նոյն իսկ անկողին մէջ ձեռքը շարժելու կարողութիւնը չմնաց: Այն ատեն Տիգրան Երկաթ ուզեց գառնալ Աթէնք՝ որուն օդը կը կարծէր որ փրկարար պիտի ըլլար իրեն: Շոգենաւ տարինք զինքը գրեթէ զրկած, ու երբ նաւը հեռացաւ, հասկցանք որ

ա՛լ պիտի չտեսնայինք զինքը: Աթէնք հասնելուն հիւանդանոց փոխադրուած էր: Իրեն ուղղա՞ծ վերջին նա՞մակիս մէջ կը գրէի. «Լո՛ւր տուր ինձի բու վրագ, մա՞նաւանդ աղէկ լուրեր, նոյն իսկ եթէ տկարութիւնդ կը շարունակէ, խաբէ զիս ու գրէ որ առողջանալու վրայ ես:» Խեղճ Տիգրան Երկաթ իրաւցնէ փորձած էր զիս խաբել զբերով որ օրէ օր ոյժ կ'աճնէ ու քիչ ժամանակէն պիտի կրնայ հիւանդանոցը թողուլ եւ Բարիկ վերադա՞նալ, մինչդեռ վիճակը աւելի ծանրանալով, մայրը եկած էր Պոլսէն փոխադրելու համար զինքը իր ծննդավայրը: Պոլսի երթալէն ետքը ա՛լ ուղղակի լուր չունէի իրմէ, զիտէի որ գերմանական հիւանդանոցը դացած էր նախ ու յետոյ իրենց տունը և միշտ հիւանդ էր: Վերջերս յանկարծ Ռիվիչ տե Ռիվիչին մէջ իր յօգուածը կարգացի և մտածեցի որ ապրելու կամքը կը շարունակէր զիմացի հիւանդութեան, և ահա՛ անցած օրի մահուան լուրը առինք:

* * *

Իր իշատակին նուիրած այս քանի մը տողերս կը գգամ որ շատ տարտամ, շատ անկատար գաղափար մը տուին Տիգրան Երկաթին վրայ: Պէտք էր տեսած ըլլալ զինքը մօտէն, մտերմանալ հետը, ճանչնալ ներքին մարդը, ըմբռնելու համար այն անհո՛ւն կակիծը որ մահը տուաւ իր բարեկամներուն: Տիգրան Երկաթին կապուեցանք յարգանքով, գուրդուբանքով ու սիրով, որովհետեւ չտեսանք ուրիշ տեղ ազնուութիւնը, շնորհքն ու տաղանդը այնքան ներդաշնակօրէն միացած՝ որչափ իր մէջը:

Ապանեխիչ բան մը կար իր վրան, եթէ կարելի է ըսել այսպէս, որ իրեն մօտեցողը կը մաքրէր, կը բարոյականացնէր: Իրեն հետ մարդ գրեթէ բռնի ազնիւ ու բարձր կ'ըլլար: Ահ, եթէ Տիգրան Երկաթի պէս աղւոր հօգիներու չհանդիպէինք մերթ ընդ մերթ, որչափ զգուելի, որչափ դաճն պիտի ըլլար Վեանքը իր գրծանքներով, իր կեղծաւորութիւններով, իր գձձութիւններով, իր դեանաքարշութեամբ:

Իր ազնուական պատկերը անշուշտ մտքերնուս մէջ անջինջ պիտի պահենք մինչև որ մէկիկ մէկիկ մենք ալ անհետանանք ու մեզի հետ իր պատկերը վերջնականապէս արուի ու ա՛լ փոշի դաճնայ:

Ե. Օ.

ՉԱՄԻՍԼԱՄՈՒԹԻՒՆ
ԵՒ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԲՐՈՒԱԿԱՆՏԱ

Իբր քսան տարիէ ի վեր, մահմետական աշխարհը հետամուտ է կազմակերպուելու՝ քրիստոնէութեան դէմ

կռուին համար: Առանց հրամարելու «վասն ամենամեծ փառացն Ալլահին ու մարգարէին» տիեզերական տիրապետութեան վաղուց ընդհատուած իր երազէն, իր մըշտական մտմտուցն է անվթար պահել այսօրուան դիրքը, սպասելով որ վրիժառութեան ժամը հնչէ: Իրենց իշխանութեան ներքեւ մահմետականներ ունեցող եւրոպական պետութիւնները գիտեն թէ ապստամբութեան ոգին յաճախ մնայուն է իրենց այդ հպատակներուն մէջ: Պարտաւորեցան զսպելու ապստամբական շարժումներ՝ որոնց մէջ, գրեթէ միշտ, կրօնական մոլեռանդութիւնը առաջին դերը կը խաղար: Այսպէս, մահմետական մոլեռանդութեան նոր զարթոնումի մը նշանները ինքնին մեզ պիտի չզարմացնէին, եթէ միեւնոյն ժամանակ աշխարհի զանազան մասերուն մէջ երևան գալով և այնպիսի պարագաներու մէջ որ կարծես զիտամբ ստեղծուած են, մեր մասնաւոր ուշադրութեան արժանի չըլլային:

Թեհալիոյ մէջ Թիւրքիոյ տարած յաղթութիւնները ամէն երկրի մահմետականներէն ողջունուեցան իբրեւ սրբազան դատի մը յաղթանակը: Սուլթանին ու իր բանակին յաջողութեան համար աղօթեցին Սինտի ու Բէնճապի, ինչպէս Գահիրէի ու Ալեքսանդրիայի մզկիթներուն մէջ: Ալճերիա և Թունուզ բազմաթիւ մզկիթներու մէջ հրապարակային աղօթքներ եղան: Գիշերային ժողովներու մէջ, մոլեռանդ խուաններ (այսինքն մահմետական ընկերակցութեան մը համախոհները) բիւրաւոր անգամներ Ալլահին ու իր մարգարէին աղաղակեցին՝ որպէսզի մահմետական աշխարհէն հրաշքով մը վանտէ ատելի Բուսիները (քրիստոնեայ): Կառավարութիւնը պարտաւորուեցաւ կարգ մը արաբերէն թերթերու մուտքը արգելել, առանց սակայն կարող ըլլալու առաջն առնել մեծադրոգ լուրերու գալստեանը ու անոնց արագ ծաւալմանը: — Մարտ ևս, Ալճերիայի ու Թունուզի պէս, լսեց յաղթութեան շեփորը: 1898 զեկտեմբեր 18ին, Թանճերի Էլ Մուսուսա թերթը յօդուած մը հրատարակեց որուն խորագիրը ինքնին նշանակիչ է. «Կարելի է Արեւելքի վերադարձնել իր անցեալ փառքը՝ մահմետականութեան զօրութեամբ»: — Մայրաքոյն Մաղրէպի հետ ծայրագոյն Արեւելք կը միանան այս ցոյցերուն: Հուանտական Հնդկաստանի ու Ֆիլիպեան կղզիներուն մէջ, մահմետականները ընդվզման նշաններ ցոյց կուտան: Կեդրոնական Ասիոյ մէջ, ապստամբութեան մը սկզբնաւորութիւնը առաջ կուգայ: Տենդայոյ շունչ մը կ'անցնի իսլամական աշխարհին վրայէն:

Մահմետական եռանդին զարթոնումին բոլոր այս նշանները, Եւրոպայի մէջ, կառավարութեանց ուշադրութիւնը հրաւիրեցին, ինչպէս նաև հանրային կարծիքին որ տակաւին այնքան ուժգնօրէն յուզուած էր Հայաստանի ջարդերէն: Պրանսայի մէջ, Թիւրքիայէն եկած թղթակցութիւններ՝ վերը յուզուած վրդովիչ շարժումները վերագրեցին համիսլամական բրբաբականտային: Անոնք հաւաստեցին թէ Ափրիկէն եկած կրօնական միաբանութեանց զխաւար շէյխերը, հրաբորբոք քարո-

զուժիններով, կը կանխագուշակէին Կ. Պոլսոյ մէջ իսլամութեան անմիջական յաղթանակը, թէ այդ շէյխերը մահմետական ընկերութեան ամէն զասերէն գործունեայ, խելացի ու հոգեով մարմնով համիւլամութեան գաղափարին նուիրուած մարդիկ կը զինուորագրէին: Վերջապէս Շէյխ Մուսաի ու Շէյխ Տաֆլըի անունները յիշեցին, որոնց առաջինը Լիբիական անապատէն (Ափրիկէ) ու երկրորդը Երլտըզ ֆէօշկէն՝ հին աշխարհին վրայ տարածուած այդ շարժման թելերը կը վարէին: Այդ անձնավորութիւնները տեսակ մը մթութեան մէջ կը մնան, ինչպէս նաև այն կրօնական միաբանութիւնները որոնց կը պատկանին եւ որոնցմէ կը կարծուի թէ կուզայ համիւլամական յուզումներուն շարժիչ զօրութիւնը: Հետեւաբար, մահմետական կրօնային ոյժին գործերուն և արտայայտութեանց վրայ քիչ մը լոյս սփռել փորձելով ու այդ ոյժին զխաւոր գործարանները ցննելով, կը կարծենք օգտակարապէս ծառայած ըլլալ մեր գաղթային քաղաքականութեան եւ զէնքեր հայթայթել քրիստոնէական քաղաքակրթութեան, իր հակառակօրդի իսլամութեան՝ զէմ կոուելու համար:



Ինչ է «Համիւլամութիւնը» — ֆաղաքականապէս, ամէն երկրի մահմետականներուն զաշնակցութիւնն է ազատելու կամ կատարօրէն պաշտպանելու համար իսլամական այն երկիրները որոնք եւրոպական պետութիւններու կողմէ զրաւուած են կամ զրաւուելու վտանդին մէջ կը գտնուին: Իսկ կրօնապէս, վերահաստատումն է խալիֆայութեան պատմական պաշտօնին, զոր Սուլթան Ապտիւլ Համիտ յաւակնութիւնը ունի իր ամբողջութեամբ վայելելու:

Խալիֆայութիւնը իսլամութեան հիմն է: Կրօնապէս՝ այդ պաշտօնը վարողին, այսինքն խալիֆային, կը շնորհէ հոգեւոր ու քաղաքային իշխանութեան իրաւունքը: Միութեան վրայ հիմնուած կրօնական ու քաղաքային մարդապետութիւն մը բաժանում չ'ընդունիր, և, ինչպէս նոյն ինքն Մուհամմէտ կ'ըսէր. «Մարգարէին պատեանը երկու սուր պիտի չպարունակէ, նոյնպէս ալ իր իշխանութիւնը երկու թագաւոր:» Բայց օրինապէս՝ միայն չորս խալիֆայ եղած է, որոնց վերջինը, Ալի, 661ին մեռաւ: Անկէ ի վեր ճշմարտապէս օրինաւոր խալիֆայ չէ եղած եւ միայն այն օրը պիտի ըլլայ, — բան մը որ անշուշտ պիտի չպատահի, — ուր մարգարէին սերունդէն մէկը, իսլամական օրէնքին համեմատ, բոլոր հաւատացեալներէն պիտի ընտրուի այդ պաշտօնին: Խալիֆայութիւնը յափշտակուելով է զարուն՝ Օմմաններէն, Ը. զարուն՝ Ապպասեաններէն, Ժ. զարուն՝ Կ. Պոլսոյ Սուլթան Սէլիմ առաջինէն, կորսնցուց իր նուիրական հանգամանքը: Հիմա աշխարհական իշխանութիւն մըն է միայն. «Հաւատացեալներու իշխան» (Էմիր էլ մուժինին) տիտղոսը պոնելու համար, այժմու սուլթանը՝ Ապտիւլ

Համիտ՝ պարտաւորուեցաւ, որպէսզի իր տիտղոսը օրինաւոր համարուի, «Պէյա»ն կամ ճանաչուած ստանալ Մէքքէի մեծ շէրիֆէն, որ ճշմարիտ ներկայացուցիչն է խալիֆայութեան և միայն իրաւունք ունի այդ «պէյա»ն տալու, քանզի Մէքքէի մեծ շէրիֆները, որոնք թէև սուլթաններու ձեռքէն կ'առնեն իրենց պաշտօնը, Մարքէի շէրիֆներուն հետ, անվիճելի կերպով, մարգարէին ընտանիքին անդամներն են և անոնք միայն կրնան թեկնածու ըլլալ խալիֆայութեան: Սա ալ ճշմարիտ է որ մահմետականներուն մեծամասնութիւնը իրենց գառնի յաջողութեան եւ մեծ մահմետական կայսրութեան մը կազմութեան երազը իրագործելու համար, Ապտիւլ Համիտը իբրև խալիֆա կը ճանչնայ: (1)

Իսլամական միութեան շարժումը նորագոյն ժամանակի բան մը չէ: Ըստ Պ. Կապրիէլ Շարմի, առաջին համիւլամական յուզումները մէջ տեղ ելած են կեղարնական Ասիա, նպատակ ունենալով սուլթան Ապտիւլ Համիտը մտցնել իսլամական զաշնակցութեան մը մէջ ընդդէմ Անգլիոյ և Ռուսիոյ: 1873ին, Ռուսաց կողմէ Թիւրքիստանի ամբողջական զրաւման և խօլվայի խանին Չարին գերիշխանութեան տակ մտնելուն ատեն, այն վայրկեանին ուր, իրենց կողմէ, Անգլիացիներն ալ կը յառաջանային Աֆղանիստանի մէջ, Խոջանտի հին ցեղապետ մը, ֆուտէր խան, խաչակրութիւն մը քարոզած է մահմետական երկիրները արշաւողներուն դէմ: Ինքը գացած էր նաև Մէքքէ ու Պաղտատ, ուր արաբ, հընդիկ ու քիւրտ շէյխերու և մուլաններու կարեւոր գումարումներու մէջ, ներկայացուց քրիստոնէական արշաւանքի սպանալիքներուն տակ գտնուած երկիրներուն կացութիւնը, և ստիպողական կոչում մը ըրաւ Անհաւատներուն դէմ սուրբ պատերազմը մղելու: Բայց Անգլիա կը հսկեր անոր մեքենայութեանց վրայ, և խիստ ճարպիկօրէն, օգտուելով նաև զէպքերէն, փորձեց Ռուսիոյ կողմը միայն դարձնել իսլամական շարժումը:

1877ին, երբ Թիւրքիստանական պատերազմը պայթեցաւ, Անգլիա որոշեց պաշտպանել Թիւրքիան: Բայց Լորտ Պիքընսֆիլտ, իր այդ ծրագրին մասնակցող որ և է տէրութիւն մը չըսնալով, խորհեցաւ Մէրվը իբրև կեղծ ընելով Թիւրքմէն պետութիւն մը հիմնել և Թիւրքիան, Պարսկաստանը և Աֆղանիստանը Անգլիոյ միացնել Ռուսիոյ դէմ գործելու համար: Շահը իր կողմէ իննսուն հազար քիւրտ զրկել խոստացաւ, որոնք Կարսի

(1) Շիիաները, որոնք մարգարէին փեսայ ու չորրորդ խալիֆա Ալիին հետեւորդներն են, զայն միայն կը ճանչնան իբրև օրինաւոր յաջորդ Մուհամմէտի, և միա խալիֆաները կը նկատեն իբր յափշտակիչ: Այսօր երկու հարիւր վաթսուոն միլիոն մահմետականներուն մէջ տասը միլիոն Շիիտ կը հաշուուի, որոնց ութ միլիոնը Պարսկաստան կը գտնուին: Ալճերիայի ու Օմանի Մզապիթ ու Իպանիթ կոչուած բախանեալ աղանդաւորները կը հպատակին Մասքաթի իմամին:

ու էրզրումի առջե պիտի միանային հոն ժողովուած հա-
րիւր հազար թիւրքերուն: Անգլիան պիտի զրկէր երե-
սուն հազար մարդ որոնք Տրապիզոնէն Հայաստան
պիտի երթային. ասոնցմէ զատ, տասնըհինգ հազար հո-
գի անգլիական զօրքէն և քառասունըհինգ հազար հնգիկ
բնիկ զօրք պիտի գային Հնդկաստանէն Պարսից ծոցին ու
Միջագետի ճամբով. ամբողջը երկու հարիւր յիսուն հա-
զար մարդ, այսինքն՝ շատ աւելի գերազանց ուժ մը քան
ինչ որ Ռուսիա կրնար ունենալ իր սահմանազլխին այդ
մասին վրայ: Թիւրքիոյ յանձնուած էր Աֆղանիստանի
Էմիր Շիր Ալին շահելու գործը: Բայց ի զուր Ապտիւլ
Համիտ, այս իշխանին հանդէպ, գործածեց իր հաւա-
տացեալներու պետի իշխանութիւնը: Խիստ պատասխան
մը ընդունեց անկէ: Անգլիացիներու բարեկամութիւնը,
կ'ըսէր Շիր Ալի, «սառայցի վրայ գրուած խօսք մըն է:»
Ու կ'աւելցնէր. «կը ցաւիմ որ հինաւուրց բարեկամու-
թեամբ ձեր բարձրութեան միացած անգլիացիները կը
յամտին ձեզ չօգնելու այն վայրկեանին ուր Ռուսերը
ձեր մայրաքաղաքին կը յօտենան:»

Էմիրին զիմադրութիւնը ձեռնարկութիւնը արգիւցեց և
թիւրքետուական պատերազմը վերջացաւ առանց Անգ-
լիոյ միջամտութեան: Բայց Անգլիա հասկցած էր Աֆ-
ղանիստանի վրայ իր իշխանութիւնը ապահովելու հարկը.
միւս կողմէն՝ Ռուսերը որոշեցին Պարսկաստանը աննկի-
րենց ձեռքէն տակ: Արդեամբ, 1877ի վիժեալ ծրագիրը կա-
րելոր հետեւանքներ ունեցաւ. մէկ կողմէն Աֆղանիստա-
նի մէջ անգլիական արշաւանք մը, միւս կողմէն՝ Ռու-
սիոյ և Պարսկաստանի միջև զաշնադրի մը կնքուած եւ
քիչ յետոյ Մէրվի զբաւումը ռուսական բանակին ձեռքով:

1878 տարուան զէպքերը, որոնց արձագանքը շատ
մեծ եղաւ, սուլթան Ապտիւլ Համիտի բարոյական զօ-
րութեանը ծանր հարուած մը տուին: Օսմանցիները պա-
տասխանատու նկատուեցան իսլամական նոր կորուստ-
ներուն: Իսլամական զաշնակցութիւնը անոնց դէմ դար-
ձաւ. «Համարաբական զաշնակցութիւն» անունը առաւ:
Մէքքէի շուրջը միացան արաբ հարստահարեալին բոլոր
ատելութիւնը հարստահարիչ թիւրքին դէմ, եւ միևնոյն
ժամանակ անկախութեան փափաքները արաբ ցեղին,
նոյն իսկ օսմանեան գաւառներուն մէջ:

Յայտնի է որ, Ապտիւլ Համիտի իշխանութեան ա-
ռաջին ամիսները, Կ. Պոլսոյ երիտասարդ-թիւրքերու
կուսակցութիւնը, համոզուած ըլլալով որ աստուածպե-
տական զրութեան տակ թիւրքեա զէպի կործանում կը
քալէր, կայսրութեան փրկութիւնը փնտռած էր կրօնա-
կան ու աշխարհային իշխանութեան բաժանմանը մէջ:
Սուլթանին թողլով խալիֆայութեան կրօնական ազդե-
ցութիւնը, Միտհաթ փաշա ու իր բարեկամները քաղա-
քական իշխանութիւնը տուած էին նախարարութեան մը
ձեռք որ պատասխանատու էր խորհրդարանի մը ուր քը-
րիստոնեայ ու մահմետական իրարմէ չէին զանազան-
ուեր: Բայց Ապտիւլ Համիտ այդ բարեկարգութեան
գործը կեցուց շնորհազուրկ ընելով կամ աքսորելով բա-

րենորդիչները: Քանի մը ամսուան բոլորովին անուա-
նական գոյութենէ մը յետոյ, խորհրդարանը լուծուեցաւ
ու հին աստուածպետական զրութիւնը վերահաստատուե-
ցաւ: Երկու տարի ետքը, պարտութիւնները, հողային
կորուստները, Պերլինի դաշնագրին ամօթալի անթիւ
յօշուածները, որոնք եւրոպական զիւանազիտութեան կը
թողատրէին միջամտել թիւրքիոյ ներքին գործերուն,
նորէն զարթուցին, ամբողջ կայսրութեան մէջ, յեղա-
փոխական ոգին: Եւ այս անգամ խնդիրը՝ սուլթան խա-
լիֆային ձեռքը միացած կրօնական ու քաղաքական իշ-
խանութիւնը բաժնելու վրայ չէր միայն: Նոր դաշնակ-
ցութիւն մը, նոյն Միտհաթին ներշնչմանը տակ կազմ-
ուած, արաբական արին կրող ցեղերէ բնակեալ նպ-
հանքներուն ինքնօրինութիւնը կը պահանջէր, ինչպէս նաև
օսմանեան տան գահընկեցութիւնը, որոնք Ապտիւլ Հա-
միտի անձովը անկարող կը յայտարարուէին խալիֆա-
յութեան պատիւը պահպանելու: Արաբական ցեղին
անկախութիւնը, սուլթան Համիտի գահընկեցութիւնը հա-
ւատացեալներու Էմիրի աստիճանէն, այս էր-ասհա՛ Հի-
ճազէն ու Եէմէնէն եկող բոլոր ուխտաւորներուն կար-
գախօսը: Միևնոյն ժամանակ, Սուրիոյ եւ Պաղեստինի
մահմետականները, որոնք կը պահէն իրենց անկախու-
թեան յիշատակը եւ որոնք իրենց տղոց արիւնովը լը-
ճարած էին Կ. Պոլսոյ «ռազմագիտական քմահանոյք-
ները», իրենց կառավարչին՝ Միտհաթի՝ մղումին տակ,
օսմանցիներուն զիմադրելու համար ընկերակցութիւններ
կը կազմէին: Քոմիթէ մը, «Արաբական ցեղին իրաւունք-
ներուն պահպանման քոմիթէ» անունով, զուան յայ-
տարարութիւններ կը հրատարակէր օսմանցիներուն բրո-
նապետութեան դէմ: Եւ ամէն կողմ, Պոլսոյ եւ ինք-
նօրինական զաշնակցութիւններու միջև տեղի ունեցած
խուլ պայքարին ատեն, Անգլիա, հասկնալով այն օ-
գուտը զոր պիտի ունենար Միջերկրականի եզերքնե-
րուն ու Պարսկական Ծոցին վրայ իր քաղաքական
ազդեցութեան ծաւալմանը նպաստող այդ յուզումներէն,
սուլթանին դէմ ուղղուած ապստամբական շարժումը կը
քաշալերէր:

Ապտիւլ Համիտ ինքզինքը պաշտպանեց ամէն կա-
րելի միջոցներով: Տեսարակ մը, որով Խայրէտաօղի փա-
շա խալիֆայութեան մէջ խառնուած կրօնական ու քա-
ղաքական իշխանութեան բաժանման մը գաղափարը կը
պաշտպանէր, հրապարակաւ այրուեցաւ: Անուանի կրօ-
նագէտի մը, Միւնիֆ էֆէնտիի, պաշտօն յանձնուեցաւ
յիշատակագրի մը մէջ ներկայացնել Օսմանի ընտանի-
քին ունեցած իրաւունքները խալիֆայութեան վրայ, եւ
ասոր համար վարձատրուեցաւ նախարարութեամբ մը:
Միտհաթ փաշա պաշտօնանկ եղաւ Սուրիոյ կառա-
վարչութիւնէն: Եւ խիստ յարմար ատենին խորհրդաւոր
մարդասպանութիւն մը սուլթանը ազատեց Մէքքէի մեծ
չէրիֆ Հիւանիի ձեռքէն, որ յարած էր հակաթիւրք դաշ-
նակցութեան եւ կը կատակածուէր իր Անգլիոյ համախոհը:
Իրաւ է որ Ապտիւլ Համիտ, օրինաւորելու համար

օսմանցիներու խալիֆայութեան յատկանութիւնը, վայր-
կեան մը խորհեցաւ մարգարէին սերունդէն մէկը որդե-
գրել: Այսպիսի լուր մը տարածուեցաւ, բայց սուլթանը
աւելի գործնական միջոցներու դիմեց: Շատ վարպե-
տութեամբ մը շէրիֆ Հիւսնի յաջորդ կարգեց ո՛չ թէ
Անգլիոյ դեսպանին իրեն յանձնարարած անձը, այլ Ապտ-
էլ-Մոթթալիպը, որ յատկապէս նշանակուած էր Անգլիա-
ցիներուն դէմ ունեցած ատելութեանը համար: Եւ ի փո-
խարէն մեծարանքին, Ապտ-էլ-Մոթթալիպ սուլթանին
առաջարկեց նեղութիւններ յարուցանել այն պետութիւն-
ներուն՝ որոնք գաղթականութիւններ ունին Ափրիկէի ու
Հնդկաստանի մէջ: Իր այս գործին մէջ օգնելու համար
ծերունի մեծ շէրիֆին, սուլթանին գործակալներէն մին՝
շէյխ Փատիլ՝ որ երկարատեմ ապրած էր Հնդկաստան ուր
աշխատած էր քաղաքական ու կրօնական բորբականտա
ընելու, Պոլսէն Արաբիա դրկուեցաւ: Իր տրամադրութեան
տակ դրուած էին այդ նահանգներուն մէջ կեդրոնացած
զինուորական ուժերը, և պաշտօն ստուած իրեն՝ յարա-
բերութիւններ հաստատելու արաբական ցեղերու պետե-
րուն հետ, անոնց հասկցնելու համար թէ ո՞րչափ շա-
հաբեր էր իրենց համար Անգլիայէն զատուիլ ու սուլ-
թանին յանձնել ընդհանուր մահմետական գաշնակցու-
թեան սնօրինութիւնը: Եւ սուլթանին հակառակ այդ
միջոցառումն մէջ, ուր ցեղապետները ամէն բանէ առաջ
իրենց անկախութիւնը կը փնտռեն, Ապտիւլ Համիտ յա-
ջորդեցաւ, իր գործակալին եռանդին շնորհիւ, ծրագիրը
նպաստաւոր կերպով ընդունել տալ:

Միեւնոյն ժամանակ, իր մտերիմ խորհրդականներէն
մին, Ապու էլ Հուտա էֆէնտի, Մէքքէի և Մէտինէի Ռա-
ֆայիաներու ընկերակցութեան միջնորդութեամբը, այդ
քաղաքներուն մէջ բազմաթիւ համախոհներ շահեցաւ
համախոհական ծրագրին շուրջը: Ընդհանուր մահմետա-
կաններու միացման մը գաղափարը, զոր Մէքքէէն
զարձող ուխտաւորները իրենց հետ կը բերէին, սկսաւ
սարածուիլ բոլոր այն տեղերը ուր մահմետականները
քրիստոնէական լուծին տակ կ'ապրին: Պոլսէն զըր-
կուած հարիւրաւոր շէյխեր մահմետական երկիրները
կը պտտէին, հրաւիրելով հաւատացեալները որպէսզի
զան խմբուին խալիֆային շուրջը՝ զիմադրելու համար
քրիստոնէայ աշխարհին: Եւ, Պոլիս, Վաքքթ թերթին
մէջ կը գրուէր թէ իսլամական միութեան նոյն իսկ գա-
ղափարը սարսափով կը լեցնէր Եւրոպան:

Այսուհանդերձ՝ հակառակ իր առաջին առերևոյթ
յաջողութեանց՝ «Համախոհական» գաշնակցութիւնը, որ
թունուզի գրաւման պահուն «Ափրիկեան» գաշնակցու-
թեան մը փոխուած էր՝ իր գատին օգտին համար, ամ-
բողջ քսան տարի ամուլ մնալու սահմանուած էր: Թու-
նուզի գրաւումը և թէլ-էլ-Բէպիրի պատերազմը մահա-
ցու հարուած մը տուած էին անոր: Բայց թիսալիա-
կան նորագոյն յաղթութիւնները ելեկտրացուցին իս-
լամութիւնը և համախոհութեան դարձուցին կորուսած
կուռանք: Պիտի ջանանք ճանչցնել սոյն գաշնակցու-

թեան գործունէութեան միջոցները, ուսումնասիրելով կը-
րօնական միաբանութիւնները, Մէքքէի ուխտագնացու-
թիւնը, գաղթականական շարժումը և վերջապէս մահ-
մետականութիւնը տարածելու հաւար եղած քարոզու-
թիւնները:

* * *

Միաստուածեան կրօնական երեք մեծ յղացումներէն՝
իսլամութիւնը այն կրօնքն է որ ամէնէն աւելի որոշու
զօրաւոր կերպով յարած է աստուածութեան: Իր Աստ-
ուածը բարձր ու վեր կը մնայ նիւթական աշխարհէն՝
զոր ստեղծած է և զոր ամէն օր նորանոր ստեղծագոր-
ծութիւններով կը զարդարէ: Աստուած է ամէն բանի
պատճառը: Մարդ իր գործերուն մէջ ազատ կամեցո-
ղութիւն չունի: Աստուած է միակ ազգակը որ կը
շարժէ բնական և զերբնական աշխարհը: Անանցանելի
լիճ մը կը բաժնէ արարածը իր արարչէն: Բայց մարդ-
կային հոգիին մէջ, անյաղթելի եւ ծածուկ տենչանք մը
կայ ժօտնալու այդ խորհրդաւոր աստուածութեան ու-
րուն գոյութիւնը կը նշմարէ թէ՛ բնութեան և թէ՛ իր
մէջը: Եթէ չի կրնար յարաբերութեան մտնել դերագոյն
էակին հետ, միջնորդ մը պէտք է ընարէ, կամ լաւ եւս
յափշտակութեամբ պէտք է բարձրանայ մինչեւ Աստ-
ուած:

Այսպէս էր որ իսլամութեան առաջին դարերու խիստ
աստուածութեան մէջ սուրբերու պաշտամունք մը և տե-
ոակ մը միստիքականութիւն առաջ եկան, որոնք իրենց
նուիրական գրքին տրուած կամայական մեկնութիւն-
ներու շնորհիւ, խիստ առաձգական կապով մը միա-
ցան իսլամական ուղղափառութեան հետ: այս միս-
տիքականութիւնը և սուրբերու պաշտամունքը հոգիին
հակապահանջն է ընդդէմ Ղուրանին ցուրտ ու բանական
վարդապետութեան:

Այս ճամբուն մէջ առաջին քայլը եղաւ Մուհամ-
մէտին աստուածային գործիքի մը աստիճանին բարձրա-
ցումը: Երկրորդն է՝ իր սերունդին յաջորդներուն փոխան-
ցուած աստուածային շնորհքին տուրքը: Յետոյ կ'երե-
ւայ «Սուֆի»ն, այսինքն իր անձնական արժանիքով
սուրբը: Ինքն է կերպով մը հոգիի սրբութեան և մարմ-
նոյ արհամարհանքի մասին հնդկական յղացման մարմ-
նացումը: Աղքատութեամբ, ծոմապահութեամբ, աշխար-
հային բարեքներէն հրաժարումով և մենակեցութեամբ՝ Սու-
ֆին տաժանօրէն կը յառաջանայ այն ճամբուն մէջ որ
զինքը կ'առաջնորդէ միստիքական քաղցրութիւններու և
մտքի զինովութեանց. իր «հոգեկան վերեք»ին գազա-
թը կը զգայ աստուածային շունչին հետ իր շիւումը:
Այս դերագոյն մերձեցման մէջ՝ զոր «երկու ծովերու մի-
ութիւնը» կը կոչէ, Սուֆին կ'ընդունի «պարագա»ն կամ
աստուածային օրհնութիւնը որ իրեն իրաւունք կուտայ
մարդկութիւնը ուղղելու դէպի Աստուծոյ ճանաչումը:

Սուֆիականութիւնը հրաշալի կերպով պատասխա-
նեց մահմետական հոգիին խանդավառութեանը, և ահա

ինչու համար իր առաքելները միշտ յաջողութեամբ կը ունեցան, եւ, կարգ մը երկիրներու մէջ, գրեթէ բոլորովին կործանեցին պաշտօնական կրօնաւորներու ազդեցութիւնը: Իրբեւ Տէրվիշ, Փաքիր կամ Մարապութ շրջելով մահմետական երկիրները, խլամութեան ամենակարևոր կերպարանափոխութիւն մը կրել տուին: Հաւատարածութեան համար՝ ժողովրդական հաւատալիքներն ու անհղութիւնները իւրացնելէ ետքը, մարգարէին կրօնքին մէջ մտցուցին մարգապաշտութեան ճշմարիտ պաշտամունք մը, որ բոլորովին հակառակ է միաստուածութեան ոգիին, քանզի «Սուֆի»ները, Աստուծոյ այդ ներշնչեալները, մեռնելով՝ կը սրբացնեն այն հողը, «մուխ», ուր իրենց մարմինը կը հանգչի, եւ այդպէս ազօթատեղիի փոխուած իրենց դերեզմանին վրայ է որ մահմետականները կուզան մարդուն մատուցանել պաշտամունք մը որ միայն Աստուծոյ կը պատճանի: Սուֆիականութիւնը իր ծագման ժամանակ խոտորէն կը պահանջէր կրօնքի եւ ընկերական առաքինութեանց պահպանումը. այսօր, մէկ սկզբունքի մը մէջ կ'ամփոփուի, որ ճշմարիտ կղերական հերձուած մըն է. այսինքն՝ հաւատացեալը բացարձակապէս իր հոգեւոր տիրոջ, Սուֆիին, պէտք է հպատակի:

Այս տերը ուսեալ բարեպաշտները կ'առաջնորդէ հոգեկան վերելքին ծայրագոյն աստիճանը, «Ֆէնա»ն, որ է Աստուծոյ մէջ անէանալ՝ բիրաւոր անդամ կրկնուած «տիրք»ներով կամ ազօթքներով. տգէտ ամբոխին կը պատուիրէ արտաքին արարողութիւններ, ինչպէս երգ, ազադակ, պար կամ անպարարութիւններ որոնք ջլախտաւոր յափշտակութիւններու կը տանին զիրենք եւ որոնց միջոցին հաւատացեալները կը կարծեն թէ աստուածային ոգիով լեցուած են: Իրենց իշխանութեան օրէնքի ուժ տալու համար, Սուֆիները կրթնած են կարգ մը յաջորդական սուրբերու որոնց հետեւորդներն են «Թարիքա»ի (այսինքն՝ հոգեւոր ճամբուն) մէջ: Այս է որ կ'անուանեն միասիրեական շղթան: Վերջին օղակը կը կազմէ այն սուրբը որ անմիջական զխաւորը եղած է Սուֆիին. ասկէ ետքը կուզան շարք մը — առաւել կամ նուազ երկար, այս կամ այն կրօնական կարգին համեմատ — ուրիշ օղակներ սուրբերու անուններով կազմուած, որոնք յաջորդաբար անհրաժեշտ են իրենց վարպետութիւնը. այս շղթան կը հասնի մինչեւ Մուհամմէտին, յետոյ մինչեւ Գարրիէլ հրեշտակին, որ բուն իսկ Ալլահին բերանն է:

ՏԸՐՈՆ ԵՒ ՏԷՔԱՐԴ

(Ռուվիշ տը Բարի)

Շարունակելի

ՄՂԶԱԽԱՆԶԸ

ԿԱՂԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Միջոցէն ու ժամանակէն ազատագրուած, ծովեր ու ցամաքներ անցեր էր ան:

Ամայի անսահման ճամբաներուն երկայնքը հեռուէն կ'երթար հիմա միս մինակ:

Չմեռուան պայծառ ու պաղ զիշեր մըն էր: Համատարած ձիւնէն ճերմակ մշուտը մէջ, անզգայ բուն ցուրտին որ իր պարարտ մարմինը կը խախտէր ու աչքերը կ'արցունքատէր, Նազարէթ քաղաքը կը շտապէր անգաղար, կարծես վարէն հետապնդելով լուսնկային որ, ջինջ երկինքին վրայ, իր առջեւէն, կ'աճապարէր խելայեղօրէն:

Անհուն պատանքուած տարածութիւններ կոխկրտեց վազնիվազ: Խարխուլ աղէտոգում կամուրջներէ անցաւ հալածական: Կմախացած անտառներու զօրհուրանքին մէջ մխրճուեցաւ, ու շարաշուք աւերակներու ստոսած սուղին ուղիներէն սողսկեցաւ:

Իր հզօր ոտքերը չէին վերաւորեր ձիւնին տակ գարանակալ խոչերն ու քարերը տախանլի ճամբուն, իր հուժկու ծունկերը չէին կրեր անոր զսեան վերելքնուն ու գահավէժ վայրկջներուն վրայ:

Անճիգ, գրեթէ անզիտակից վազը մըն էր ասիկա Հայաստանի ճմուռած կուրծքին վրայ, որուն դիակնային պաղութեանը ետին Հայրենիքի սիրան ալ կարծես սառած էր՝ ու զազրած տրոփելէ:

Նազարէթ չորդին կը նայէր, արագ ու համասենն նայուածքով մը որ կը զրկէր, կը պարուրէր Յուսահատութեան երկրին եղբրական համայնապատկերը որուն վրայ վիթխարի լուսութիւն մը կ'անհունանար, կը հոլաթեւէր:

Բայց Սիփանը որուն անգարսիւր ստուերին մէջէն քաղեց պահ մը՝ միշտ նոյնն էր իր կազերուն ու կատարին խոժոռու արհամարհոտ հաստատութիւնովը: Երբ սուր որուն ափերէն կ'երթար հիմա՝ նոյնն էր միշտ, ամենի ու տիրական: Անոր խրոխտ ալիքներուն վեհապանծ երջը չէր արտմեր բնաւ իր ոտոգած հողին ցաւէն:

* * *

Նազարէթ կը ճանչնար բոլոր այդ ճամբաները, բոլոր այդ դաշտերն ու լեռները, բոլոր այդ գետերն ու անտառները, — բոլոր այդ երկիրը՝ աւերակներու ու զեղեցիութեան:

Իր շրջուն վաճառականի ու վաշխառուի համեստ կեանքին երեսուն արգաւանդ տարիները ապրած էր հոտ: Քանի անգամներ՝ բեռնաւորուած կարաւաններով ու

զինուած ուղեկիցներով անցած էր այդ տեղերէն: Քաղաքէ քաղաք կանգ կ'առնէր: Զորքները կը թեթեցնէր իրենց բեռներէն, ու մէջքին վրայ ոսկիին քեւերը ծանրացուցած՝ ճամբան կը շարունակէր:

Անկից ի վեր յաղթանակէ յաղթանակ քալեր էր, ու բազմը չէր դադարէր իրեն յագտելէ:

Հայաստանի դաւաճներուն մէջ իր շրջուն վաճառականի ու վաշխառուի տքնութիւններովը յաջողած պատկառելի կծիկ մը շինելու, Պոլիս գացեր վաճառականական տուն մը հիմնէր էր:

Ճշմարտապէս ու խորապէս Հայ՝ արդարացուցած էր իր ցեղին տխուր ու գերազանց յատկութեան համբարը՝ Պոլսոյ հրապարակին վրայ քիչ ատենէն գերակշիռ դիրքի մը հասնելով: Վերջապէս օր մը ինքզինքը կազմ ու պատրաստ զգացած էր երթալ Եւրոպա հաստատուելու, յանձնակատարներու աւելորդ ու սուղ միջնորդութենէն ազատագրուելու համար:

Տարի մը վերջը առաջնակարգ շիրքը մը կը նկատուէր արդէն Մանչեսթրի մէջ: Տեղին հինաւուրց ողբալի «բարիններ» զգուշաւոր ու յարգալից խոնարհումներով կը բարեկէն զինքը: Իրենց աքթի ցաւագին անկարողութեանը մէջ համակերպած ու շահախնդիր՝ այս սըրտառուչ ու ազնիւ էակները կը բաւականանային շատ շատ, խորհրդապահ անկիւններ, անոր շիւ անցեալը պրպտելով ու անոր յաջողութեան պարկեշտութիւնը — օ՛ դժնգակ հեգնութիւնը այս երկու բաներուն հրէշային զուգաւորումին — կատկածի տակ դնելով:

Բայց Նազարէթ իր նիւթական գերազանցութեան վայրագ ու հեշտալի համոզումին մէջ արհամարհոտ ճղճիմ ձրի նկատումներու՝ հերոսաբար կը պտըտցնէր իր քաւովընէ զեղջուկի խանդավառ ու անվիանդ անճոռնութիւնը, իր եղբայրակիցներէն օգտուելով կարելի եղածին չափ ու, անկից անդին, հոգիին խորքէն անհունօրէն երեծտկալով անոնց գաղափարին:

Մանչեսթրի մօտ դիւղ մը քաշուած կ'ապրէր ան, վեհափառօրէն շրջապատուած իր բազմանդամ ընտանիքովը: Իր գաւակները կ'աճէին, կ'ուճանային ու անասնաբար կը խոստանային ըլլալ՝ շահագործումի նուիրական ճամբուն մէջ՝ իրենց փառապսակ հօրը արժանի յաջորդներ:

Այցելուները չէին պակսեր իրեն, ու իր սեղանը պատուողները հազուադիւս չէին, քահանան ու երէցկիւնը չէին զլանար անոր տունը լեցնելու իրենց սխրալի օրհններովը: Ու Նազարէթ հասած ըլլալ կը կարծէր իր երջանկութեան իտէալին, որչափ որ մարդկօրէն կարելի էր յուսալ ատոր:



Հիմա իր այս վերագարձի խօլական վազքին մէջ կը տեսնար ան որ շատ քիչ բան փոխուած էր, հայրենի երկրին վրայ, իր յաղթական պանդխտումէն ի վեր: Հա-

զիւ աւերակներու դժխեմ տարածութիւնները ընդարձակուեր էին քիչ մը ամէն կողմ:

Նազարէթ քայլերը դանդաղացուց:

Իր քաղաքին մօտեցած էր:

Բլուրին մերկ կուշտին վրայ ձիւնով ծածկուած ցած տանիքները, ճերմակ հագած որբերու պէս զլուփ պլիտ տրտմօրէն՝ կը դիզուէին իրարու վրայ: Տեղ տեղ ծերացած մերկ պատուհաններէ ցոլացող հիւանդ լոյսեր՝ ներսի աղօտ, մարող կեանքերուն տաժանքը կը դուժկին:

Անդին զատիլեր բացաստանի մը վրայ կանգուն յամառող եկեղեցիին վաղնջական դմբթը կ'ուրուագծուէր կիսաստուերին մէջ:

Նազարէթ կանգ առաւ փայտէ խրխլած դրան մը ետին ու ականջը ճեղքի մը դրած մտիկ ըրաւ:

Պզտիկ աղջկան վիրաւոր ձայն մը կը հեծկտար ներսէն:

— Մայրիկ, ինչո՞ւ պտուղէ զրկեցիր զիս այս գիշեր... ինչո՞ւ կաղնղչէք մը չըրիք ինձի... հայրեկս միշտ պտուղ ու խաղալիք կը բերէր ինձի կաղնղին... ինչո՞ւ տարին հայրեկս... ինչո՞ւ երգող տղաքները մեր դուռը չը զարկին այս տարի... ինչո՞ւ, մայրիկ... ի՞նչ կայ... ի՞նչ եղաւ... մայրիկ...

Ու կսկծոտ մայրիկը յուսահատօրէն՝

— Ա՛խ, աղջիկս, ա՛խ... մի՛ լար, աղջիկս... հոգիս քեզի զուրպան... իմ ձայնս Աստուած չլսեց... քո՛ւկ պ պիտի չլսէ ան... մի՛ լար, հոգիս, մի՛ լար...

Քանի մը քայլ անդին, ուրիշ դրան մը առջեւ կեցաւ ու խոպոտ, ախտաւոր ձայն մը լսեց: Կաղնղի գիշերով անօթութեան չարաչար բողոքն էր ատ որ կը ժայթքէր ճերուռիի մը ժանգոտած կուրճէն:

— Աստուած, Աստուած, Աստուած... ա՛լ հերիք է մեր քաշածը... դեռ չկշտացա՞ր դուն մեր անօթութեանէն... մինչև հիմա լուռ կեցայ ու գանգաւ չըրի քեզի... բայց այս իրիկուն հասկցի՛ր որ չեմ կրնար չըֆրել քեզի... ամբողջ տարին, ամէն օր, անօթութիւնը մեր աղիքները չձգեց... ա՛լ գրեթէ վարժուեցանք անոր... բայց կաղնղի իրիկունը անօթի չենք կրնար մնալ, Աստուած... ասիկա չ'ըլլար, Աստուած... դեռ չկշտացա՞ր դուն մեր անօթութեանէն...

Նազարէթ դռնէ դուռ կը վազէր հիմա, ականջ տալով այդ կոծումի, բողոքի, անձկութեան եւ պաղատանքի ներսերէն ելլող անդուհական ձայներուն որոնք եղբայրօրէն իրարու միանալով ու ահեղօրէն ներգաշնակուելով՝ խուլ ահագին վայնասուն մը կ'ուճանային ա՛լ, որ քաղաքին զիշերը կը լեցնէր և որուն յաճախ կուգային եղերականօրէն խանուիլ օրհասական մահասարսուտ հանդիւններ:

Երկինքը միշտ իր ակնապարար պայծառութիւնը պահած էր ու անոր միապաղաղ երանութեանը մէջ գինով թաւարող կուշտուկուռ լուսնկային ապուշ ու յղփացած երեսը կարծես տառապանքը կը հեգնէր վարը սովալլուկ գալարուող հեծութեան քաղաքին:

Յանկարծ ձայները մարեցան ամենուրեք:

Եկեղեցիին զանգակը սկսաւ իր հնչական արցունքները թափել հեռաւորօրէն, իր հայցող, միտաբական, աղերսաւոր արցունքները որոնք իրարու ետեւէ կ'իյնային զիշերին երեսն ի վար, ու կը գլորէին, կը հասնէին մինչև յետին խրճիթին անկայուն պատերը ու անոնցմէ ներս անվհատ յոյսին լուսաւոր սարսուռը կը նետէին ընկճուած, խորտակուած հոգիներու խաւարին մէջ:

Դոնորը սկսան բացուիլ մէկիկ մէկիկ ու զոգոջուն էակներու բազմութիւն մը դուրս ելաւ անոնցմէ:

Ամենքն ալ սեւեր հագած էին, ու ձիւնէն ճերմակ ճամբուն վրայ իրենց սգակիր ուխտաւորութիւնը տաժանազինօրէն կը շտապէր գէպի եկեղեցին:

Ողբագին զանգակը դեռ կուլար հոնկից իր մաքուր, ողորմուկ երգը:

Կթոտ ծերունիներ ու երբրուն պատաններ առջեւէն կ'երթային, կըթնած իրենց երկայն բարի ցուպերուն: Դէմքերնին սև քաղերու տակ ծածկած երիտասարդ սրբեւարիներ կուգային անոնց ետեւէն, իրենց որբերուն ձեռքէն բռնած քաշելով: Ու բոլոր տաժանակիր տողանցութիւնը՝ կոտորածէն մնացած ընտանիքի հայրերու, ցամքած մայրերու, կմախացած ու կորաքամակ երիտասարդներու, հիւժուած, խամրած մանչերու ու աղջիկներու:

Նազարէթ, հեռուէն, բնազդաբար մղուեցաւ հետեւ լուցաւ այս աղիողորմ թափորին:

Երբ եկեղեցիէն ներս մտաւ, արդէն ամենքը ծունկի եկած փութով կը խաչակնքուէին, ու պահ մը վերջը, պաղատանքի հոգին կարկառուօրէն արձանացան ամենքն ալ գէպի խորանը:

Մեռելական լուծիւն մը կը խորունկնար տաճարին խորհրդակիր կիսաստուերին մէջ:

Խորանին վրայ, խաչելութեան անորոշ ու ճաթրտած պատկերին առջև պլպլացող կանթեղին լոյսին տակ անշարժ երիտասարդ քահանայ մը բազկատարած կը լռէր:

Քանի մը խորունկ ու ճնշող վայրկեաններ անհունօրէն երկնցան:

Նազարէթ, շուարած ու զահանդած, յուսահատ ճիւղեր կ'ընէր բացատրելու ինքզինքին այս բոլորը:

Յանկարծական խլրտում մը ընդմիջեց իր շփոթ անզամանքը: Ու մէկէն, բոլոր նայուածքները իրեն վրայ դարձան շեշտակի:

Ճանչցեր էին զինքը: Անոնց զրկանքի ու տաժանքի զոյութիւններուն քայքայումին վրայ բարձրացեր էր իր առատութեան ու վայելքի կեանքին շնական յաղթանակը:

Նազարէթ սարսուռեցաւ այդ նայուածքներու ատելութեան մոլեգին ուժգնութենէն:

Ու բոլոր մտաթափ մահացու ձեռքերը, ըմբոստացումի ահարկու շարժումով մը գէպի իրեն ձգտուեցան սպանական:

Նազարէթ սարսափած, ուզեց դուրս ելլել զաւիթէն: Բայց աներևոյթ, անզիմարելի զօրութիւն մը հոտ կը

գամէր զինքը գետնին:

Ճարահատած, սկսաւ խաչակնքուիլ ու աղօթել: Ժամուցի հրաշալի խոստումներով օգնութեան կանչեց վախտուններու ամենողորմ ու հաճոյակատար աստուածը: Ի զուր: Անօթի փրփրացող բերաններէ անզթօրէն քաշուած պատաններով զիզած իր ոսկիին շեղջը չպիտի փրկէր զինքը:

Նազարէթ ամբողջ յագեցած մարմնովը կը զոզար հիմա քահանային նայելով սր խորանին սանդուխներէն յամրաբար կ'իջնար այլակերպած, ու գէպի իրեն կուգար կարծես ակամայ իր շանթահարիչ նայուածքէն քաշուած, առաջնորդուած:

Պղինձէ խաչ մը բռնած էր մէկ ձեռքովը զօր կը շարժէր ալետանջ ամբոխին վրայ, ու անոր բոլոր վերէն կատաղութենէն — անօթութեան բոլոր այդ արիւնի ծարաւէն — ինքն ալ զինուցած, խենդեցած կը խոյանար:

Քայլ մըն ալ, ու քահանային ձեռքը վաշխառուին սրտին մէջ մխրճեց վրիժառու խաչ-դաշոյնը...:

* *

Նազարէթ հրէշային աղաղակ մը արձակեց ու նետուեցաւ անկողինէն դուրս: Իր կինը որուն ճղճիմ մարմինը ճզմած էր իր սթափուածի զիւային ոտտումին մէջ՝ լեղապատառ արթնցաւ:

— Ի՞նչ կայ, Աստուած իմ, ի՞նչ ունիս:

Նազարէթ մոմ մը վառեց, ու լուռ, խենդի պէս սկըսաւ քաշել սենեակին մէջ:

Բայց կրակը մարած էր ու սենեակին ցորտէն ստիպուած՝ նորէն անկողին գնաց երկնալ կնոջը քով որ սահմուկած իրեն կը նայէր աղաչաւոր:

Նազարէթ ի զուր ջանաց աչքերը գոցել: Մղձաւանջը խողոված էր անոր խաւարչտին հոգիին ճախճախուտ խաղաղութիւնը ու խղճիխայթին եղբրական ջահը անցուցած էր անոր մէջէն:

* *

Յաջորդ առտուն Նազարէթ փութով ոսկի մը դրկեց Պոլսոյ Պատրիարքարանը, «Հայաստանի սովեախներուն համար»: Ու այն զիշերը պայծառ ու անբասիր խղճմտանքներու երանութեան թանձր բունովը խոկաց մինչև լոյս:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ

Տխրոչքեան դերը: — Տիգրան Երկար: — Շիջեչախա սևեռն մը:

Լոնտոն, 28 դեկտեմբեր 99.

Նորէն մահեր: Ամէն անգամ երբ քրոնիկիս մէջ գա-

զազնբու շուրջը կը յածիմ, կը յիշեմ տէրտէր մը որ ատենօք հեռուօր արուարձանէ մը միշտ վազնիվազ Օրթագեղ կուգար հարուստի մը մահուան լուրը աննելուն: Օր մը ցուրտ, անձրևոտ օդով մը դարձեալ եկած էր. յուզարկաւորներէն մէկը քահանային բարեկամաբար դիտուելով ըրաւ այն նեղութեանցը համար զոր կը կրէր ո՛ր է հարուստի մը թաղումին հանդիսական գտնուելու փութաշանութեանը պատճառաւ:

— Օրհնա՛՛՛՛՛, պատասխանեց տէրտէրը միամտաբար, մենք ալ ասանկ օրուան մը կը նայինք:

Կը վախնամ թէ այդ տէրտէրին նման ես ալ « ասանկ օրուան մը » կը նայիմ: Օ՛հ, չէ: Եթէ գերեզմանի մը այցելութիւնը, ծաղիկներու ընծայատարութեամբ, կը թեթևեթև սրախն արտումութեան ճնշումը, գիշերուան լուսութեան մէջ՝ մեռելներու յիշատակին հետ կենակցութիւնը հոգին խոշտանդող տառապանք մըն է որուն համար պիտի ուզէինք խնդրել. « Թէ որ կարելի է թո՛ղ այս բաժակը ինէ անցնի »: Բայց խնդրել որմա՞ն: Մեր սիրտն ալ, մեր միտքն ալ Դիպուածին ստրուկներն են:

Դեղին, մառախլայեղց առտու մըն էր որ Միր—Երոյի սևազին երկտողը մեզի Տիգրան Երկաթի մահը իմացուց: Հիմակ դուրսը անձրևին շտաշուկը, ներսը կրակին ճարճատինը կը զաշնաւորեն իրար, ու այդ մահերգակ մեղեդիին հծծիւնովը պահ մը միայնակ կ'ապրիմ այդ ազնուագրի զրազէտին յիշատակին հետ, յիշատակ 94—95ի երազանքի օրերուն, որ մեռելի մը մահճին վերև վառուած կերտնին պէս բալ լոյս մը կը զոզըզազանէ Երկաթի մահափայլ զէմքին վրայ:

Այդ օրերը կը պատրաստուէինք, թեւեր առած, իտէական հայրենիք մը սլանալ, ամենքս միաշու: Ու նմանեցանք զլեցազնեղութեան հարիւրնաւեայ տորմին որ մինչ արեգակ առտու մը առադաստները տոկ օդին պարզած, մեղմաշունչ հիւսիսակով վանայ ծովուն վրայէն զէպի Հայկ կը սուրար, յանկարծ զիւաշունչ մըրիկը ցիրուցան ըրաւ ամենքը: Ո՛րը խութերն առին, ո՛րը ծանծաղները, ո՛րը հեռուօր ափերն ինկաւ, ո՛րը կղզիները. այլ ևս « ոչ մնացին երկուք ի մի »: Մենք ալ չմնացինք « երկուք ի մի ». ո՛րը Պուլկարիան առաւ, ո՛րը Յունաստանը, ո՛րը Եգիպտոս ինկաւ, ո՛րը Բարեղ, ո՛րը Լոնտոն, ո՛րն ալ գերեզման:

Օր մը 97ի սկիզբները Բարեղէն առի Տիգրան Երկաթին լուրերը: Հայաստանի փրկութիւնը ապահովելու ծրագիրներ յղացած էր, խանդավառ երեակայութեամբ: Հնդկաց աշխարհը պիտի երթար, հո՛ն հնախոյզի մը սիրաբորբոք համբերութեամբը պիտի պրպտէր մինչև իսկ այլասերեալ Հայազարմերու զիմագծեր սրպէս զի անոնց ներքև Ռափայէլ Ղարամբանի, Սամուէլ Մուրատի զգացումներուն ժառանգորդները գտնէր: Կը հաւտար թէ մոռցուած հայրենիքի մը արիւնին ողբը պիտի թրթռացնէր այդ սրտերուն մէջ ցեղային արիւնին ձայնը, որ թէև մարած բայց ո՛չ խղզուած կը կարծէր: Ու իր բանաստեղծական խորհուրդները զրական իրականութեան վերա-

ծելու համար իր յոյսը կը դնէր մեր աշակցութեանը վրայ: Բայց թուականը 97 էր: Ետեննիս թողած էինք տարի մը որուն համար մեր պատմութիւնը պիտի ըսէ. « Խաւարը ու մահուան շուքը իրենց սեփականեն զանիկայ »: Ազգային հաւատքին հիւսման տարին էր եղած ան: Հաւատացեալ իմաստասէր մը կը կարծէ թէ կրօնական անհաւատութիւնը ոճիր մը չէ այլ աւելի մեծ բան մը՝ զժբազդութիւն մը. մենք ալ ընդունինք թէ ազգերու համար քաղաքական անհաւատութիւնը զժբազդութիւն մը չէ, այլ աւելի մեծ բան մը՝ մահուան կոչնակահարութիւնը: Այդ կոչնակն էր որ 97ին կը զարնէր, ու զօղանջը մինչև հեռուօր Հայոց սրտերուն խորը արձագանգ տալով կ'ամայացնէր զանոնք: Ո՛ր պիտի երթար Տիգրան Երկաթ. պատարկ հոգիներո՞ւ կոչում ընելու: Չէ՛, պէտք էր համբերող ըլլալ եւ սպասել սարսափին յիշատակներուն սկարացմանը: Ազգերն ալ քիչ մը տըղու պէս են. կը մոռնան ցաւը ու կը շարունակեն ուրախութեան կեանքը:

Տարի մը ետքը, յունուարի սկիզբը, իրար Գահիրէ կը գտնէինք: Ինչքան փոխուած էր խեղճ երիտասարդը Հայրենիքի խմբագրատունը իրմէն բաժնուելու ի վեր: Արպանաց մենասէր ծաղիկն, աղւոր Էտէլլիսին պէս տըժգոյն էր հիմակ, բայց ժպիտը իր ազնուօգի նրբնի զէմքին վրայ միշտ թռչտուն: Այդ պայծառ արեւին զէմ տրտմութիւն կը զիմանայ:

Արեգակէն սիրտ առած, Տիգրան Երկաթ ընդարձակ ծրագիրներ կը պատրաստէր ապագային համար: Երկու տարի ֆրանսական մամուլին միջոցաւ շատ բան ըրած էր: Ու նաև Քամառ—Քաթիպան էր թարգմանած, ու Ռըվիտ տե Ռըվիտի ընթերցողներուն որոշ գաղափար մը տուած էր Թիւրքիոյ եւ Ռուսիոյ Հայոց զրականութեան վրայ: Ինքն ալ, Չօպանեանի պէս, ցոյց տուած էր Եւրոպայի թէ սուլթանը հայկական կոտորածովը քաղաքակրթութեան յառաջիմութեան գաղափարն էր որ Թիւրքիոյ մէջ սպաննել կ'ուզէր: Հիմակ այլ եւս համբաւ մը կը վայելէր: Իր առջև բաց էին հանդէսները, ու կ'ուզէր այս բարեյաջող հանգամանքէն օգտուիլ ի նպատակ Հայ ազգին: Հայ ազգային հոգով ու մտքով խմբագրուած ֆրանսերէն թերթի մը պէտքը զգացնել տուինք իրեն. այդ գաղափարը իրագործելու համար իրարու ժամադիր եղանք Բարեղ 98ի ամառը: Եգիպտական արեւը զիս ալ պատրած էր:

Ու հիմակ երբ այդ գուժը կ'առնեմ իր բոլոր բարեկամներուն հետ սփոփանքս կը գտնեմ յիշելով հին երգ մը. « Վասն հայրենեաց մեռար, զու շա՛տ ապրեցար: » Տիգրան Երկաթ որ քսանընթաց տարեկան կը մեռնի, բաւական ապրած է, զի ետին կը թողու մահարձան մը զրականութեան եւ հայրենասիրութեան:

* * *

Տարիներով շատ ապրեցաւ Սերգիս պէյ Պալեան,

ու երբ 70ին մէջ կը մեռնի, տրտմութեան թեթև զգացում մը խսկ մեր սիրտը բուսկ մը չի խոռովեր, վասն զի բան մը չթողուց իր ետին այն մարդը որ հայ ազգին էն ժողովրդական անուններէն մէկուն ժառանգորդն էր:

Կը յիշեմ այն օրը ուր Պալեան Կարապետ ամիրային մահուան լուրը տարածուեցաւ Պոլիս, եւ անոր հետ բանաստեղծութիւն մը հրատարակ ելաւ, թղթեան կամ թերթեան ստորագրուած: Դեռ նոր «ուղղական բան, սեռական բանի» կը սորվէինք. այդ ոտանաւորէն տող մը միայն միտքս կ'իյնայ հիմա: Կարապետ ամիրայի մահուան լուրը իբր ազգային աղէտի մը գուժը մինչեւ Մասիս հասած էր, «սուրաց սլացաւ ի սառն ազատ սառնամած»: Հիմա կրնամ ըսել թէ բանաստեղծներուն ներքին այս շափագանցութեանը մէջ ճշմարտութիւնը մեծ կակ բաժին մը ունէր:

Պալեանները կը ներկայացնէին մին այն հին անուն ներքին որոնց ալ նշանաբանն էր «ազգս, աչքս»: Արջուական ճարտարապետութիւնը ընտանեկան ժառանգութիւնն էր իրենց համար ու իրենց զիրքէն կ'օգտուէին չորս կողմերին բարիք սփռելու Հայոց: Իրենց բոլոր տիրքը հաւաքած էին Հայաստանցին ու Պոլսեցին, զեղեցկին ճաշակովը կը ճոխացնէին ամենքը: Երիտասարդ Նիկողոս Պալեանի մահը հայ ազգին համար զառն կորուստ մը եղաւ. ու երբ Յակոբ Պալեան Բարիզ մեռաւ, ամենախորին կսկիծ մը զառնացուց ամենուս սրտերը: Խուռ ներամ մտքիս մէջ կ'արթննան այդ բոլոր յիշատակները: Մարդիկ կան որ իրենց գործերուն զաւակն են, մարդիկ ալ կան որ իրենց հօրը գործերուն զաւակն են. Սարգիս պէյ Պալեան իր եղբայրներուն զաւակն էր, եւ իբր այն մտքերնիս կ'իյնայ: Իր եղբայրները մտքին, արուեստին զեղեցկութիւնը սիրեցին: Սարգիս պէյ նիւթական գոեհիկ վայելքներէն վեր չկրցաւ բարձրանալ:

Իր ազգային կեանքը աւանդութեան մը մէջ կ'ամփոփուի. «Մայր Արաքսի»ի պոլսական եղանակին հեղինակն է: Կը փափաքէի որ գոնէ այս աւանդութիւնը ստուգուէր, ու այդ Պալեանը իր ետին բան մը թողած ըլլար:

ՀՐԱԶԴԱՆ

ԹԻԻՐՔԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Երբտրը խուճապական տաղնապի մէջ է: Սուլթանին թեոյրը Տաւատ Մահմուտ փաշա, զեկտեմբերի վերջին օրերը, իր երկու շափահաս զաւակները մէկտեղ առած Պոլսէն զաղտնապէս մեկնեցաւ: Մահմուտ փաշա Մարտիկ ու Բարիզ իրեն այցելողներուն պարզեց սուլթանին

քաղաքականութիւնը որ երկիրը արաշաբար կը կործանէ: Այս փախուստը, իր սեռական մէջ եղական, նոր օրինակ խիստ բողոք մըն է Համիտի դէմ, ու ազգեցութիւնը զգալի կ'ըլլայ: Արքայական ընտանիքին անգամ ներքին ուրիշներ ալ, ինչպէս նաև բարձրաստիճան անձնատուութիւններ կը պատրաստուին Մահմուտ փաշայի օրինակին հետեւիլ: Սուլթանը այս փախուստները արգիլելու համար ամենախիստ միջոցներ ձեռք առած է: Այս վախերը միանալով Մահմուտ փաշայի փախուստին, ու վերջին շաբաթներս Պոլիս ականաւոր թիրաքերու գէմ տնօրինուած խստութիւններուն, զրգուած վիճակի մը մէջ կը պահեն իսլամութիւնը:

Ներքին այս ծանր կացութիւնը բաւական չհամարելով սուլթանը մտաբերեց վատահամբաւութեան դատ բանալ Բարիզի Օսոս լրագրին դէմ, որուն խմբագիրներէն պարոնայք Կօիէ Գիյար, Մալաթօ, ո'ւ է առթէ կ'օգտուին Մեծ-Մարդասպանը խարակելու համար: Յրանսացի հրատարակագիրները, օրէնքի նրբութիւններով, զուցէ զրամական տուգանքի մը դատապարտուին, բայց զատաստանը սուլթանին եղեանագործութիւնները արինի կարմիր լոյսով մը նորէն պիտի փայլեցնէ ընդհանուր մարդկութեան աչքերուն:

Թրանսիլաւի դէպքերը հետզհետէ աւելի չէզոքացընելով Անգլիան, Ռուսիա կ'ուզէ այս հանգամանքներէն օգտուիլ և թիրաքի մէջ կորսնցուցած քաղաքական կրուանին վերստին տիրելու փորձեր ընել: Իբր փոխարինութիւն Պաղտատի գծին, որուն մենաշնորհը գերման զրամատան մը տրուեցաւ, Բեղրպուրիի զահլիճը կը պահանջէ Կարսէն Էրզրում երկաթուղի մը շինելու արտօնութիւնը ռուսական ընկերութեան մը տալ, — պահանջում մը որուն սուլթանը չի կրնար զոհացում տալ, հետեւաբար Պաղտատի գծին խնդիրն ալ կը կնճոտի. պարագայ մը որ աննպաստ չէ սուլթանին երկրի մի քաղաքականութեանը:

Միացեալ-Նահանգներէն ալ կարեւոր լուրեր կը հասնին: Ամերիկեան քաղաքացի Հայոց դէմ սուլթանին խուստութիւնները կը զրգոեն Մեծ-Հանրապետութիւնը որ թուի թէ այլեւս տրամադիր պիտի չերևի հանգուրժելու իր իրաւունքներուն բռնաբարմանը: Ահաւասիկ Մարտիկի խորհրդարանին ուղղած յայտարարութեան այն մասը որ մեզի կը վերաբերի:

«Միացեալ Նահանգներու Կ. Պոլսոյ գեսպանը կը շարունակէ ճնշում բանեցնել եւ զրամական հատուցում պահանջել այն վիսաններուն զոր ամերիկեան քաղաքացիներ կրեցին օսմանեան կառավարութենէն՝ պատահած անկարգութեանց միջոցին: Այդ պահանջները մէկ քանի տարիէ ի վեր առկախ կը մնան: Ամերիկեան կառավարութիւնը այս մասին ընդհանուր համաձայնութեան մը յանգելու յոյս ունի:

«Թիրաք պետութեան մէջ ամերիկեան քաղաքացիներու վիճակը զոհացուցիչ չէ: Քառասուն տարիէ ի վեր քաղաքացիութեան մասին դաշնագրութեան մը յան-

գելու մեր բոլոր ջանքերը կ'երեւի թէ վերջնական ան-
յաջողութեան պիտի մատնուին Բ. Դրան ընդգրկած
քաղաքականութեան պատճառաւ, որով ան կը մերժէ
1867էն առիկ թիւրք հպատակներու օտար երկրի քա-
ղաքացի ըլլալու օրինականութիւնը:»

Այս խնդիրներու մասին առաջ կը բերենք Տէյլի
Քրօնիքի խմբագրական մէկ յօդուածին հետեւեալ մասը.

«Ռուսերը, կը զրէ արմատական թերթը, իրենց յա-
տուկ պատճառներով հզօրապէս կ'ընդդիմանան հայ գաղ-
թականներուն ներկայութեանը իրենց հողին վրայ, եւ
հաւանական է որ ամբողջ հայկական խնդիրը նորէն
յարուցուի ո՛չ այն ծիծաղելի եղանակովը որով սուլ-
թանը Ֆրանսայի մէջ վատահամբաւութեան գատ կը բա-
նայ, այլ շատ աւելի ազդեցիկ եւ տհաճելի եղանակով
մը՝ Միացեալ-Նահանգներուն քաղաքացի եղած Հայոց
հպատակութեան առթիւ: Թիւրք իշխանութիւնները չեն
ուզեր այդ հպատակութիւնը ճանչնալ: Նախագահ Մաք-
քինլիի խորհրդարանին ուղղած յայտարարութիւնը ցոյց
կուտար թէ Ռուշիկթընի դահլիճը վերջնապէս որոշած
է կարգադրել այս գործը որ շատոնց ի վեր առ կախ կը
մնայ, և այս մասին հարկ եղած արտօնութիւնը խնդ-
րուեցաւ խորհրդարանէն: Միացեալ-Նահանգներուն խոր-
հրդարանին արդի տրամադրութեանը մէջ, կտրուի և վըճ-
ուական ձեռնարկ մը շատ հաւանական է հաստատելու
համար ամերիկեան այդ իրաւունքները: Եւ Միացեալ-
Նահանգներու նաւատորմին ներկայութիւնը, որ գործելու
համար հրահանգներ ստացած ըլլայ, ո՛չ միայն վաղընդ-
փոյթ պիտի կարգադրէ երկու կառավարութեանց միջև
սովոր խնդիրը, այլ եւ պիտի նպաստէ աւելի հանգիստ
կենցաղավարութիւն մը ապահովելու սուլթանին հպա-
տակ Հայերուն »

Նոր տարուան համար ահա մեզի ալ ժպտուն յոյս
մը, որ ուրիշ ամէն յոյսերու պէս կրնայ ցնդիլ սուլթա-
նին զիւանագիտութեամբը, եթէ Հայ ազգը ինքն ալ
գործնական միջոցներով ուժգնապէս չփարի ինքնօգնու-
թեան գաղափարին:

ԱՆՁՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՄԸ

Պ. Մինաս Չերազ, զոր « Հայաստան եւ Կ. Պոլիս »
ուսումնասիրութեանս մէջ ցոյց տուած էի իբր զխաւոր
զերակատարներէն մին Վանի Վարժապետանոցին փակ-
մանը, իր թերթին մէջ ի գուր կ'ոգորի իր այդ բարոյա-
կան ոճրին բռնէն ճողապրիլ: Պատմութիւնը — մեզի այս-
բան ձօս պատմութիւնը — կարելի չէ խեղաթիւրել: Պ.
Չերազ վերջերս անգամ մըն ալ նոյն յանցանքին մէջ
բռնուեցաւ: Տատեան Արթին փաշան արդարացնելու հա-

մար — որուն հետ չեմ գիտեր ի՞նչ թաքուն շահեր կը կա-
պեն զինքը, կամ թերեւս շատ լաւ գիտեմ — ելաւ իր
թերթին մէջ հերքեց իմ « Կ. Պոլսոյ պահպանողական
վարչութիւնները » ուսումնասիրութեանս այն հատուածը ո-
րուն մէջ ցոյց կուտայի թէ Տատեան Արթին փաշան էր
որ յաջողեցաւ ետ առնել տալ Գում-Գարուի ցոյցին
առթիւ Ալըզեան պատրիարքին հրաժարականը, որուն
այնքան կարևորութիւն կ'ընծայէին եւրոպական կառա-
վարութիւնները: Կ. Պոլսոյ հայերէն ու ֆրանսեան գլխերէն
թերթերէն պաշտօնական տեղեկութիւններ արտագրելու վ,
հաստատեցի իմ ըսածիս պատմական ճշդութիւնը, և հը-
րաւիրեցի Պ. Չերազը որ տարրական ազնուութիւնը ունե-
նենայ իր սրբազրութիւնը սրբազրելու: Եւ սակայն Տատ-
եան Արթին փաշային հլու գործիքը լուռ մնաց:

Պ. Չերազ Վանի Վարժապետանոցը փակողներուն
առաջնորդն էր. — կը կրկնեմ ասիկա, ու պատմած զէպ-
քերէս նշանախեց մը անգամ չեմ փոխեր:

Պ. Չերազ, ասիկց գատ, տկար ու ցած մարդերու
զէնքին կը դիմէ, — իմ զէմս հանելով մեռած ու թաղուած
զրպարտութիւն մը, զոր ժամանակին ի գուր ճգնած են
ինծի դէմ շահագործել:

Ասիկա իս շատ չի գարմացներ: Վարժուած եմ ատոր,
վարժուած եմ մութին մէջ զարթնող ու կոնսկէս տրուող
հարուածներու. — զրպարտութիւն, մասնութիւն, դաշոյն,
ահա զէնքերը որոնք ինծի դէմ եղած են միշտ: Գիտեմ
որ շատ հակառակորդներ ունիմ, բայց գիտեմ նաև որ
աշխատած չեմ անոնց թիւը նուազեցնելու, կամ զա-
նոնք ողբեցելու: Ահա քառորդ դարէն աւելի է որ կը գոր-
ծեմ ու կը գրեմ, ու անխնայ կուտուր մը եղած եմ միշտ,
բոլոր հոգովս փարած ստանձնած գործիս և զայն ա-
ռաջ տանելու միայն ջանադիր, առանց ուշ դարձնելու
տուած հարուածներուս պատասխանող ցաւի կամ ատե-
լութեան աղաղակներուն: Զարմանք չէ որ վաստկած
ըլլամ թշնամիներու պատկառելի թիւ մը, բայց ցաւալի է
որ շատ քիչ անգամ տրուած է ինծի հանգիստի սուղներու
որոնք կոխը ընդունին ճակատբաց ու խիզախ, — արու-
թեան ու անկեղծութեան կոխը որ հանրային միտքը կը
չինէ և որ քեզի աւելի կը սիրցնէ նպատակը որուն կը զի-
մես: Ինչպէս ըսի, իմ դժբաղդութիւնս եղած է զէմս գտնել
մարդիկ որոնք չեն վարանած է՛ն զճուճ ու է՛ն անարգ
զէնքերը գործածելու ինծի դէմ: Պ. Չերազ, շնորհա-
ւորելի փութկոտութեամբ մը, կը վազէ կուգայ իր պատ-
ւոյ տեղը բռնելու ասոնց մէջ:

Այսպէս ուրեմն, չ'Արմէնիի տնօրէնը ինծի դէմ կը
կրկնէ հին պատմութիւն մը, որուն համեմատ իբր թէ
Միացեալ Ընկերութեանց սնտուկէն 40 ոսկի իւրացու-
ցած ըլլամ, և թէ արդէն Միացեալ Ընկերութիւնները
հիմնած ըլլամ՝ պարզապէս հոն տեղաւորելու համար
եղբայրս ու չեմ գիտեր ո՛ր հեռաւոր ազգականս է՛:

Կը մտածեմ հիմա թէ իրաւցնէ կ'արժէ յոգնութիւնը
յանձն առնել ասիկա հերքելու: Երիտասարդութեանդ
ամբողջ տարիները գործի մը նուիրել, կեանքը ու հոգիդ

ու պատիւը ու բոլոր սերդ անոր կապել, գուրգուրալ անոր վրայ ինչպէս թերեւս երբեք ժարդ մը գուրգուրալ ցած չըլլայ իր սիրած էն ըզձալի էակին վրայ, ու զայն ի գլուխ հանել, ամբաստնել, առ նուազն 10,000 ոսկիի գումար մը ապահովել անոր, — և այս ամէնը՝ մէջէն 40 ոսկի իւրացնելու հեռաւոր ու դիւային դիտաւորութեամբ: Ասոր հաւտացողներ կրնան ըլլալ:

Ինծի կ'ըսեն սակայն թէ, ամէն զգուանք մէկիլի թողլու եմ ու այդ հին դիակը նորէն իր տեղը թաղելու եմ. — ու ասիկա եթէ ոչ ուրիշ բանի՛ գոնէ Պ. Չերազի ազնուութեանը հաւտացողները — եթէ զեռ մնացած են — լուսաւորելու համար:

Լաւ ուրեմն... Արդարութիւնը պարտք կը դնէ վրաս ըսել թէ այդ զրպարտութեան հեղինակը Պ. Չերազ ինքը չէ: Ուրիշներ, կրքերու սաստկութեանը մէջ, չլարանցան այդ անարժան զէնքը գործածելու ինծի դէմ: Անմիջապէս որ ատոր վերահասու եղայ, բողոք բարձայ Միացեալ ընկերութեանց ընդհանուր ժողովին, և բոլոր ուժովս քննութիւն պահանջեցի, զոր արդիւլ կ'ուզէին անոնք իսկ որ զրպարտութիւնը տարածած էին: Միացեալ ընկերութեանց Տնօրէն ժողովը, որ իմ անձնական հակառակորդներէս կը բաղկանար, կատարեց այդ ըննութիւնը: Երկու հօդիէ պատուոյ ատեան մը կազմուեցաւ, մէկը Տնօրէն ժողովին և միւրը իմ կողմէս նշանակուած: Անհամաձայնութեան պարագային, այդ երկուքը երրորդ մը պիտի նշանակէին: Պատուոյ ատեանը գումարուեցաւ Միացեալ ընկերութեանց զբասնենակը: ՈՉ ՈՒՔ ՆԵՐԿԱՅԱՑԱԻ իբր ամբաստանող: Մի՛շտ նոյն վատ ու ուղորմելի միջոցները ինծի դէմ, «կ'ըսեն», «կը լսուի»: Ես պատմեցի այդ զրպարտութեան ծագումին շարժառիթները, ու նշանակեցի զանոնք տարածողները և բոլոր այն միջոցները որոնց դիմած էին մութին մէջ՝ զիս վատահամբաւելու համար: Բոլոր իրողութիւնները մանրակրկիտ կերպով քննուեցան և ճշգրտուեցան: Գրիգոր Չօհրապ որ իբր Տնօրէն ժողովի անդամ ներկայ էր նստին, իմ ամէնէն անհաշտ հակառակորդներէս մին էր այս գործին մէջ. բայց երբ ճշմարտութեանը իրազեկ եղաւ, իբրև ազնիւ մարդ մը՝ այլայլեցաւ ու զգուանքը յայտնեց այն մեքենայութեանց համար որոնք ինծի դէմ սարքուել էին և որոնց ինքն ալ պահ մը հաւտացած էր, իր խանդոտ երիտասարդութեան թափին մէջ: Երկու իրաւարարները միաձայնութեամբ ստորագրեցին իրենց վրձիւը, իր ամէն կէտերուն մէջ ինծի նպաստաւոր, զոր Գրիգոր Չօհրապ ինքը խմբագրեց ու յետոյ եկաւ ձեռքս սեղմելու, ցաւ յայտնելով որ անգիտակցաբար անիրաւած իր ինծի դէմ: Այդ օրէն զարձաւ եղաւ էն շերմ բարեկամներէս մին, աջակցելով Կ. Պոլսոյ այն ամէն թերթերուն որոնց հիմնադրութեանը մէջ ես ալ մաս ունէի:

Պ. Մինաս Չերազ անունները կը յիշէ մէկ քանի անձերու որոնք, իր խօսքովը, մինչև հիմակ կրնան վկայել եղբր ինծի վերադրուած ստոր արարքին ճշգրտութեանը: Չեմ ուզեր փնտռել հասկնալ թէ իրացնէ այդ անձերը

մինչև այսօր կը պնդեն սուտի մը վրայ որ քսան տարի առաջ հնարուեցաւ իրենց գիտաւթեամբը՝ զիւրին վրէժ մը լուծելու համար ինէ: Բայց, ամէն պարագայի մէջ, շատ պիտի զարմանայի եթէ իրօք այդ շարքին մէջ ըլլար Պ. Կարապետ Սըվաճեան, որուն հետ մէկտեղ, յիշեալ դէպքէն ետքը, Արևելքը հիմեցինք ձեռք ձեռքի եւ տարիներով գործակցեցանք Կ. Պոլսոյ հանրային գործերուն վարչութեանը մէջ, և որ նոյն իսկ, անկեղծութեան յանկարծական խանդով մը, յայտարարեց իրաւարարական ժողովին թէ ինքն ալ Չ ոսկի տուած էր Միացեալ ընկերութեանց մէկ ստորագրաւ պաշտօնէին՝ ինծի դէմ սուտ վկայութիւն ընելու համար յերիւրուած զրպարտութեան մէջ, — ճիշդ ինչպէս Պ. Յովհաննէս Արշակունի ալ Տ ոսկի տուած էր նոյն նպատակով:

Ճշմարտութիւնը սա է որ Պ. Մինաս Չերազ քաջ գիտէ պաշտօնապէս կատարուած քննութեան արդիւնքը որ քանզեց սուտի վրայ հիմնուած այդ շէնքը, ու քննութեան միջոցին ու քննութենէն ետքը անբաժան էր միշտ ինէ, շերմ բարեկամութեան կապերով կապուած: Անկից ի վեր իբր քսան տարի անցած է, ու այս քսան տարուան միջոցին, հանրային կոնիւնքու առթիւ ինծի դէմ եղած բոլոր յարձակումներուն մէջ, ոչ ոք այնքան ցած ու ապուշ գտնուած էր որ ինծի դէմ նորէն գործածէր այդ վարկաբեկ եղած սուտը: Պ. Մինաս Չերազ միայն այդ քաջութիւնը կրնար ունենալ:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՐՇԱԽԱՆՔ. Ազգիակաւ քերթերը Կ. Պոլսէն հեռուեալ հեռագիրները կը հրատարակեն.

Դեկտեմբեր 22. Դռաք տեղեկոյնքիւն ստացաւ որ վարսաւն զիւնուած Հայի բաղկացած հրոսախոռուր մը Հէքքեարիի ևսահագր արշաւեր է: Կ'ըսուի թէ այս հրոսախոռուրը պարսկական սահմանագլխէն քրքակաւը ակցնելէն յետոյ հանդիպեցաւ օսմանեան զօրքերուն ուրոնց հետ տեղի ունեցած կռուիէ մէջ հայերէն տասնը հիւզ հոգի սպաննուեցան եւ հիւզ հոգի գերի բռնուեցան: Մնացած քառասունը պարսկական սահմանագլխէն քաշուեցան:

Դեկտեմբեր 27. Լոսը կը հասնի թէ շարունակ ընդհարումներ տեղի կ'ունենան պարսկական սահմանագլխի վրայ Պարսիկ, Ռոսս եւ Հայ խոռուրերու թիւրք զօրքերու միջև: Աւետաւ 11 ին Ռոսսերու եւ Հայերու հրոսախոռուր մը օսմանեան հողը ակցաւ, Պալսոյ քերթաքաղաքի մօտ, Արարատէն 15 մղոն դէպի հարաւ արևմուտք, ու ակնհայտօր օսմանեան պա-

հակներռն հետ կռոշի բնուեցաւ:

Երկու օր ետքը ուրիշ խոսքեր մըն ալ, որոնց մէջ կ'ըստէր թէ քանի մը պարսիկ կանոնաւոր զօրքեր ալ կան, նմանապէս օսմանեան հոյր անցաւ և հոն անբացաւ: Պաշտօնական շրջանակներու ստացած տեղեկութեանց համեմատ, արշաւողները իրենց դիրքերը գրաւած կը պահէին: Հոս հասած յոշորոշումը համեմատ կը հաշուարկէր թէ յարձակողները շարունակ թէ՛ Ռուսիայէն և թէ Պարսկաստանէն ռազմաւթերը եւ ուսուստ կը ստանան:

Վերջին յոշորոշումը նայելով ամսուս 21ին և 23ին կախներ տեղի ունեցեր են, որոնցմէ արշաւողները 27 հոգիի կորուստ ունեցեր են, իսկ թիւրքերը 13 սպանուած ու 12 վիրաւոր:

Այսօր պաշտար նախարարական ժողով գումարուեցաւ. երկարատեւ խորհրդակցութենէ մը ետքը ազդուապէս յանձնարարուեցաւ որ Դոշար Պարսկաստանի եւ Ռուսիոյ խիստ դիտողութիւններ ուղղէ, որպէս զի արգիլեն օսմանեան հոյրն վրայ ետ արշաւանքներ:

ՌԻՒՍԻ ԻՆՏԵՐԻ ԴՈՒՐՍԻՆ մահուանը, Անգլիոյ մէջ կը կորսնցնենք մեր դատին եւ հօգօր ու հեղինակաւոր պաշտպաններէն մին: Հանգուցեալ զոքքը, իբր նախագահ Հայկական Նպաստարարաց Բանձնաժողովին, իբր 150,000 ոսկի դրկած է հայ տաւապեայներուն. ու ատկից զատ, սկիզբէն ի վեր, ամեն աշիբ յաւ համարած է իր ազգակիցներուն մտքին մէջ վաս պահելու համար Հայկական խնդիրը:

Իր մահուան առթիւ Հայերու կողմէ եղած ցաւակցական արտայայտութիւններն եղան միայն, որչափ մենք գիտենք, հետագիւր մը Բարիցի Հայրենասիրական ընկերակցութեան նախագահ Պ. Յ. Խաքէնտերէն, և ուղղորդ մը Լոնտոնի Հայ գործաւորներու եւ ուսանողներու Միութենէն որ իր նստին մէջ յոտնկայս յարգանքի հարկը մատուց հանգուցեային յիշատակին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՈՒՍԸ ՖՐԱՆՍԱՅ. Արշալ Զօպանեան կը շարունակէ Հայերը և հայկական հարցը Ֆրանսայի մէջ ծանօթացնելու աչքան օգտակար ու նպատակայարմար գործը: Ֆրանսայի բազմաթիւ քաղաքներու Աշխարհագրական ընկերութիւններէն հրաշիրուած, հետզհետէ բանաստեղծութիւններ կատարած է Պաշտար-Տիւրք, Էրիմալ, Նանսի, ու յաջորդաբար պիտի բանաստեղծէ Լիլ, Ռուսսել, Թուրքոզան, Նանք, Մարսէլ, Պրզանտե, Թուրքոզ և այլն: Իր կատարած բանաստեղծութիւնները արդէն կատարեալ յաջողութիւններ եղած են: Հայկական դատին համար եական ծանայութիւն մըն է Արշալ Զօպանեանի գործունեութեան այս ետր եղանակը:

ԹՐԱՆՍՎԱՍԿԱՆ պատերազմին առթիւ մտերու Անգլիայէն մեկնելիք կամաւորներուն մէջ կը գտնուէր Հայ երիտասարդ մը, Պ. Միսար Սոզգիլեան, Միտրլիսի կամաւորներու շարքի գորարանակէն: Պ. Սոզգիլեան վերջերս, եղեկեր 25ին, իր գորակնին մրցանակաբաշխութեան ատեն, տարեկան առաջին մրցանակը ըստացած էր զնդապետ Լորտ Տեկիլիէն՝ նշանաւորութեան հա-

մար, բոլոր ներկաները չէրմապէս ծախանարելով այդ Հայը որ Անգլիոյ դրօշակին տակ զինուորագրուած էր:

ԱՍՏՈՒԾՈՅ ՄՍՏԸ. Անգլիոյ մերտական համալսարանը քարոզիչ Պատ. Բրայն Հիւզը, որ Թրանսվասի պատերազմը արդար ու Աստուծոյ համելի կը գտնէ, անցեալ կիրակի Սեն Ճեյմս'ս Հոլ բանաստեղծութեան մը միջոցին ըսաւ թէ այդ պատերազմին մէջ Անգլիոյ միւլեւէ հիմա կրած ձախորդութիւնները՝ իր դատին անարդարութեան նշանները չեն: «Չէ՛, ըսաւ, այդ ձախորդութիւնները Աստուծոյ կողմէ դրկուած պատի մըն է մեզի՛ որովհետեւ թող տուէր որ թիւրաւոր Հայեր կորնչին, առանց օգնութեան մեք կարկանդակ ունեցի: »

Կը յիշուէր թէ 1897ին ալ Բարից Պապար տը Գաւիթի աղետքին առթիւ ուր հարիւրէն աւելի աններքոցներու մէջ կորսուեցան, զմիւսիկան հաշակաւոր քարոզիչ Հ. Օլիվիէ ըսաւ թէ Աստուծոյ կողմէ դրկուած պատուհաս մըն էր ատկիս Ֆրանսայի՝ Հայերուն օգնած շնորհուն համար:

Աւելի աղէկ պիտի չըլլար սակայն եթէ Աստուծոյ ուղղակի տուրքան Համիտին զլխուն դրկիր իր պատուանները:

ԹԻՒՐԿԻԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ. Դոշար, պատասխանելով Ռուսիոյ վերջին ծանուցագրին որով ազդուապէս կը պահանջէր պատերազմական տուգանքին շեղումը, ըսաւ վճարուելու, յայտարարէր է թէ յունուար 12 ին այդ շեղումները պիտի վճարուին (°):

Ռուսական դեսպանատունը ետր ծանուցագիր մը դրկիր է Դրան շատ խիստ լեզուով մը խմբագրուած, որով կը գանգատի Փոքր-Ասիոյ իշխանութեանց վարձուներէն, որ պատճառ կ'ըլլայ Հայերուն նորէն նորէն Ռուսիա գաղթելուն:

Դեսպանատունը միանգամայն կը բողոքէ այն իրողութեանը դիմ թէ Ռուսական անցագիր ունեցող Հայերու մտաւոր կ'արգիլուէ թիւրքիս:

ՎՐԻՊՈՒԿ. «Նախահայերը» յօդուածին մէջ (Թիւ 23 գեկտ. 1), Տաօիսի բառին ըմբ 354 թուականը աւելորդ է: Բշարը, շբար՝ պէտք է կարգալ բշարը, շբարը, ու Մծնկերալ Մծնկերու:

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱՍՆԵԳԻՆ
ՆՈՐ ԿԵՍՆԻԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգին զրկել առ
L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՆՈՐ ԿԵՍՆԻՔ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին և 15ին: Բաժնեգինն է Եւրոպայի համար տարեկան 10 և վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար: